

31 Ա/

18

# ԱԶԳԻՆ ՎԱՐԻՉՆԵՐԸ

Բ. ՄԱՍ

—

ԳՐԵՑ

(Գարագաշեան) ՍԵՒՅՈՆՔԵԱՆ ԹՈՎՄԱՍ

362

գ-34

Տպ. «Սահմակ-Մելոպ», Գանիրէ

1930

Ձ. Ա. Հ.

1 MAR 201  
թ. 133. Եկատ. Խորհրդայի Պատմութեան Առաջնական  
Քարտ, 31. 8. 931  
Հայաստան

## ԱԶԳԻՆ ՎԱՐԻՉՆԵՐԸ

362  
9-34

Բ. ՄԱՍ

Բ ա ց Ն ա մ ա կ  
Աւղլուած Ն. Վ. Պօղոս Փաւա Նուպարի  
Հիմնադիր  
ցիեանս նախագահ  
եւ

2664

Մեծ Բարեկար  
Հայկ. Բարեզ. Ղնդի. Միութեան  
ՍեհՅՈՆ-ՔԵՍՆ (Գարագաւեան) ԹՈՎ.ՄԱՍ է.  
նախորդ դիւանապես, եւն.  
Ազգային այդ մեծ հաստատութեան  
Կեդրոնին մեջ  
1912 - 1923

3194



AR 2013

Գանիրէ, 12 Մարտ 1930

Զերդ Վահեմուրիւն,

Համեցէք ընդունիլ իմ եւ ընտանիքիս բոլոր անդամներուն անմռուանալի եւ ամենախորին երախտազիտուրիները, որ եք այսօ՛ր միայն կ'արտայայտուին, բայց իրենց սրերուն ծալքերուն մեջ զգացուած ու միշտ յիշուած են 1912-ին ի վեր ու աճնակս ալ կը մնան ընդ միշտ եւ ամէն վայրկեան:

Որովհետեւ, Զեր նախաձեռնութեամբը նիմնուեցաւ Բարեգործականը, որուն դիւանապետուրեան կոչուեցայ Պոլիսն, 1912ին՝ Տօֆր. Ն. Տաղաւարեանի միջոցաւ:

Որովհետեւ, այդ պաշտօնիս նետեանեով եր որ Պոլիսն Գանիրէ տեղափոխուեցաւ ընտանիքս ու ամենով զերծ մնացին թրքական կոտորածին:

Ազնուափառ եւ Վահեմուրուն

Պոլոս Փաւառ Նուպար, Հայր

Հայկ. Բարեգ. Ընդհ. Միութեան,

Բարիկ,

49641-65



Որովհետեւ, այսպիսի նախախնամական օնորի մը կարելի չէ ամեն որ չի երախտագիտութեամբ եւ գոհորիւն չի մատուցանել:

Որովհետեւ, որչափ այ Բարեգրծականի մեկ բանի Վարիչներուն անիրաւ վերաբերումին զոհուելով նեռացուած ըլլամ պատօնես՝ աւելի բան տասնեակ մը տարի սրեռանդն ու խղնմօրէն եւ կատարեալ նաւատամութեամբ անոր ծառայելի յետոյ, չեմ շփորեր սակայն անձերը գործին հետ, որ զերպանցը նույիրական է, զոր կը սիրեմ խորապես: Ուսի եւ որուն անդամակցութիւնս կը պահեմ ամրնդիա աւելի բան 17 տարիներէ ի վեր եւ որուած եմ պահել ցման:

Եւ որովհետեւ, չի պատօպանել յայտնի իրաւոնն մը, չի բոլամերկել նմանառութիւնը վատութիւն կը նամարուի, անուոււ քոյլ պիտի տաք ինձի, եօրը երկար տարիներու նամբերատութենէս վերջ, ներկայ բաց-նամակիս կցել բողոքի նիշս եւ լոյս աշխարհ նամել խեղդուած նմանառութիւնը :

Այդ ամփոփ բոլորագիրը ես պատրասեր եմ այն ատեն, բայց մինչեւ այսօր ոչ դասի ձեռնարկեր եմ, ոչ ալ նաևարակութեան տուեր: Բարեգործականի վարկաբեկած եւ կարօնիւն ու որբերը նպաստ գրեած ըլլալու խղնահարութիւն մը միտ արգիլեր է զիս ունեւ ձեռնարկե: Միւս կողմէ, խորներ եմ որ Բարեգործականի վարիչները անուոււ պիտի անդրադառնան իրենց արարին, պիտի խղնահարութիւն ու պիտի մղուին դարմանելու իրենց անաւոր սխալը :

Ապսո՞ս, յուսախարք եղայ :

Ժամանակը նասած կը նկատեմ այսէւս իրաւունքս

պատօպանելու եւ իբրեւ սկզբնաւորութիւն ներկայս կը նրատարակեմ ու անոր առաջին օրինակը կը դրկեմ Զեր Բարձրութեան: Խոլ միւս օրինակները նասարակութեան սեփականութիւն կը դարձնեմ ամիս մը վերջ միայն, ի յարգանս Զեր Բարձրութեան:

Կը նաւասիացնեմ Զեր Վանմութիւնը քե ընտանիքի հօր մը ամենատարրական պարտականութիւնը կը նկատեմ նախանձալսնդրութիւնը իր պատիւն ու զայն պատօպանելու ամեն ձեռնարկ:

Բարեգործականի այն վարիչները որ կը կարծեն քե արդարութեան, խղնմտութեան եւ նմանառութեան նակառակ ունեւ արարք վարկ կը օփնէ Բարեգործականին չարաչար կը սխալին, այդպիսի արարքներ ուու կամ կանուխ կ'անդրադառնան ուղղակի դէսի ներինակները ու անոնց վարած նասատութիւնը եւս, դժբախտաբար, իրենց նետանիներով:

Բարեգործականի այդպիսի վարիչները առնուազն պարք նկատելու են ինքզինենին սրբագրել եւ արժանի հանդիսացնել՝ վարելու նմանօրինակ հոյսկապ, որքան վսեմ նասատութիւն մը:

Զերդ յաւես երախտագէս,

Սեւլոնինեան (Պարագաւեան) Թուլմաս

## Ն Ա. Խ Ա. Բ Ա. Ն

Այս հրատարակութեան նպատակն է՝

1.— Ամեն բանի առաջ իմ պարկետուրիւնս հաստատել եւ զայն կասկածելի դարձնել նետամտողներուն բարյական արժեքը նեղել:

2.— Հանրային հաստատուրիւնց մաս կազմող Բարեգործականի պէս մեծ կազմակերպուրեան մը վարիչներէն ոմանց գործելակերպի եւ նոփեբանուրեան մեկ տկար երանգը լուսաբանել եւ ուրացուած իրաւունքներս պահպանել:

3.— Եօրենակ մը տարիներէ ի վեր իմ մէջս խեղդած բողոքի ձայնս ուժգնութեան բարձրացնել եւ լսելի ընելի Բարեգործականի անդամներուն եւ մասնաժողովներուն մասնաւանդ, որպիսզի իւրացնեն իմ բողոքս ու հասախաբար իրենց ներկայացուցիչներուն միջոցաւ, օրինական համբով, պարտաւորեցնեն Կեդրոնը արդարուրիւն ընել եւ դարմանել ինձի հանդիպ կիրարկուած սենիրաւուրիւնները:

4.— Այս հրատարակուրիւնը ուրեմն փաստացի ներբումն է միաժամանակ ո՛չ միայն Բարեգործականի Կեդր. Վարչուրիւն եւ Գործադիր Ժողովին մեկ բանի անդամներուն յոյժ քերեւորեն ( ուրիշ բառ չի գործածելու համար ) ինձի յայտնապէս յայտարած եւ վերագրած տեղուրիւններուն, այլ նաև նոյն իմաստով կատարած իրենց բոլոր արձանագրուրիւններուն և Բարիզի Կեդրոնը

կատարած հաղորդագրութիւններուն՝ որպէսզի իրենց աղալակող եւ բացայաց անիրաւութիւնները կերռնի մօս չմեղացնեն եւ ի հարկին վրիպեցնեն կամ կանխաւ արգիլած ըլլան ունեն միջամտութիւն:

5.— Այս հրատարակութիւնը կը կատարեմ նաեւ բորովին հարկադրանքի տակ, որովհետեւ ինչպէս պիտի ամենուի, օրինական նամբով իմ կատարած բոլոր դիմումներա անհետեւանք բողուցան՝ կանխորոշ կարգախոսի մը համառայի՝ պատկանեալ պատճինական մարմիններուն կողմէ, ինչպէս ոռվորութիւն է, չվետացնելու կամ համութիւն չի պատճառելու համար հեղինակներուն, առանց երբեք մտածիլու քե իրենց այդ վերաբերութիվ մասնակցած կ'ըլլան անոնց գործած անիրահասաւութիւնը:

6.— Այս հրատարակութիւնը սակայն պէտք չէ որ իբրանիկ ծառայէ Բարեգործականի ունենամիանիկ ուժանալու կամ հրաժարելու համար: Ոչ երբեք:

Ընդհանուրակը պէտք է խրան մը ըլլայ Բարեգործականը բարեկարգելու եւ իր անունին ու նպատակին համապատասխան գործելակերպով արժանի բարձրութեան հասցենելու:

Բացի այդ, Բարեգործականը պէտք չէ երբեք ոփոք զայն վարող անձերուն նևս, որոնք պատասխանառու են իրենց արարքներուն համար Օրէնսդիր եւ Գերազոյն Ընդհանուր ժողովին միայն, զոր հարկ անհրաժեշտ է անուանական հանգամանեն վերածել իրական եւ իր համակութեան համապատասխան Ընդհանուր ժողովի, ինու դրկելով ամեն տարի շատ բիւով եւ Բարեգործակա-

նը սրտանց սիրով ձեռնիսաս եւ կարող ներկայացուցիչներ:

7.— Այժմեն կը յայտարակեմ քե պատրաստ պիտի ըլլամ այս հրատարակութեան բովանդակութեան մասին ամեն լուսաբանութիւն տալու, բերանացի քե գրաւոր, երբ ուղղակի կամ անուղղակի հասցեիս դիմուի, եւ կամ հրապարականին ունենադատութեան պատասխանելու՝ երբ անկէ օրինակ մը ինձի կ'ուղարկուի առ ի փափութիւն, ինչ որ օրէնքին տրամադրութիւնն է: Այս բանաւոր պայմանները չի լրացնող ունեն գրուածք կամ խօսուածք չեն ներկայացներ ունենածին եւ կը նկատուին բարբանջամբներ, բամբասամբներ պարզապես:

Սեւյոնինեան Թովմաս

իմ հասցես նետեւեալն է:

*No, 1, Rue Moulin Français,  
Boulac, Le Caire (Egypte)*

Աւելորդ չի համարուի հոս փակագիծ մը բանակ յայտնելու համար քե՝ « Ազգին Վարիչները » իմ առաջին հրատարակութիւնս ալ, 18 տարիներ առաջ, տեղի ունեցած է նոյնական հարկադրանքի տակ, ներկայացուած է պատկան պատճինական մարմիններուն եւ ունեցած է նետեւեալ եղրակացութիւնը.—

## ԱՐԴԻՒՆՔ

« Ազգ. Երեսփ. Ժողովը որոշեց ինդիրը վե-

բաղարձնել Վարչութեան՝ ի վերաքննութիւն,  
Եւ Քաղաք. Ժողովը յանձնեց կեդր. Աւտումն.  
Խորհուրդին քննութեանը:

ԿԻԼԻԿԻՈՅ ՈՐԲԱԽՆԱՄ ԿԵԴՐ. ՅԱՆՁԱԺՈՂՈՎԸ  
ԴԱՏԱՊԱՐՏՈՒԱԾ

(ՊԱՏՃԵՆ ՈՐՈՇՄԱԳՐԻ)

Պ. Ս Բ Ի Ա Ր Ք Ա Ր Ա Ն Հ Ա Յ Ո Յ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ.

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՒՍԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Համար 289

Կոստանդնուպոլիս, 26 Ապրիլ 1912

Ամենապատի Ս. Պատր. Հայր,

Նախագահ Ազգ. Կեդր. Վարչուրեան

Պատկ. Քաղաք. Ժողովոյ

Խորհուրդա ուսարութեան առաւ Հանրնի Որբանոցի նախորդ  
Տեսուչ Գարագաւեան թովմաս Էթէնտի խնդրոյն վերաբերեալ բրդ-  
րածրար, որ Պատկ. Ժողովդ բարեհանած էր յանձնել Խորհուրդին  
նկատուման, ինչաւս նաեւ լսեց լիւեալ Էթէնտի բերանացի բա-  
ցարութիւններ, ու եւկար խորհրդակցութենէ յեսոյ դիտեց որ Կիլի-  
կիոյ Կեդր. Որբախնամ Յանձնաժողովը Գարագաւեան Էթէնտի վե-  
րաբերութիւնները պատճենացին, ինքնին ներփած է անու վե-

բագրուած ամբասանութիւնները եւ բնդունած անու անմեղութիւնը,  
քէ լիւեալը բանաւոր եւ հարկեցուցիչ պատճառներու առջեւ միայն  
չէ կրցեր կատարել իր ընտանիքը ի միասին տանելու համար նախա-  
պէս տուած խոստամբ, եւ քէ Յանձնաժողովը իր որոշումը տալէն  
յեսոյ իրաւում չուներ միջամտուի ըլլալու բնանեկան խնդիրներու,  
ու այդ պատրուակով զիմի պատօնանի բնելու, եւ այսպէս կրթական  
պատօնիք մը պատիւր խաղալիք գարձնելու բնանանոյ նկառութեան  
եւ նետեւարաց յիւեալին մասին եղած կարգադրութիւնը Խորհուրդ  
անիրաւ նկատեց, եւ օրինաւոր համարեց որ Կազմական Կանոնագրի  
41-րդ յօրուածի տրամադրութեան համաձայն հատուցուի Գարագաւ-  
եան Էթէնտի ամբողջ տարերուակը՝ իբր փոխարինութիւն եղած  
գրկանմին:

Խորհուրդը պարզելով այս խնդրոյն մէջ իր տեսութիւններն ու  
եղանակացութիւնը կը խնդրէ Պատկ. Ժողովէդ, որ բարեհանի ըստ այ-  
նու պէտք եղած միջոցը ի զործ դիմել զոհացում տրուելու համար  
Գարագաւեան Էթէնտի իրաւումին:

Մնամի նամբուրի Ս. աջոյ Զեր Բ. Մրգանութեան

Խորին յարգանենք

ի դիմաց Ռւսումնական Խորհրդոյ

Ամենաղայիր

Վ. Ամենապետի

(Սուրբ.) Յովհ. Յակոբեան

(Սուրբ.) Ա. Նիկողոսեան

Քնագրին յար եւ նման ըլլալը կը հաստատուի

18 Յունիս 1912

Կ.Պոլիս

Կնիք Ռւսումնական Խորհրդի »

Քացարութիւնները միանգամայն աւելորդ են:

Գ. Թ.»

Բ Ո Ղ Ո Ք Ա Գ Ի Բ

զոր

Եր պատոյն եւ իրաւանց  
պաշտպանութեան համար

պարտաւորուած է

Ներկայացմել Եգիպտական դատարանաց  
Հ. Բ. Ը. Ա. Միուրեան նախորդ դիւտանապես  
Սեւյոնեան Թովմաս

Գանիւէ, 10. 2. 1924.

### Տէր դատաւոր

Այսպիսի երկրի մը մէջ, ուր անձնական պատիւն ու  
իրաւունքը գերազանցապէս պաշտպանող օրէնքներ գո-  
յութիւն ունին, ուր արդարութիւնը կ'իշխէ ամէն աղ-  
դեցութենէ գեր ի վեր, ուր ակարն ու անզօրը պաշտ-  
պանուած են ուեէ զրկանքի և անիրաւութեան դէմ, ուր  
կարելի է ըսել առանց ուեէ վարանումի թէ « դատարան-  
ներ կան », որպիսին է Եգիպտոս, որ ասաներկու տա-  
րիներէ ի վեր եղած է նաև իմ և ընտանիքիս անդամ-  
ներուն բնակվայրը, կատարեալ հաւատոքով և վստա-  
ռութեամբ է որ կուգամ բարձր դատարանիդ արդարա-  
դատութեանը յանձնել խնարճաբար դատու, զոր հակա-  
ռակ իմ ջերմ փափաքիս և համբերատար հետամոռւ-

թեանցս անկարելի եղաւ այլապէս կարգադրել 4-5  
տարիներէ ի վեր, որու միջոցին ի զուր գիմեցի պատ-  
կանեաներուն ողջմուռթեանն ու խղճմուռթեանը, զի  
անոնք անողոք մերժուածով մը միայն պատասխանեցին  
իմ բոլոր գիմուռմաներուն և ոչ մէկ յարդ և կարեւորու-  
թիւն ընծայեցին անոնց:

Այդ գատը կը ներկայացնէ կրկին հանգամանք, բա-  
րյական եւ նիւրական և անո՞ր համար մանաւանդ մեծ  
կարեւորութիւն ունի, որպէսնեաւ բարոյական և բարե-  
գործական հաստատութեան մը հետ է, այսինքն Հայկա-  
կան Բարեգործական Ընդհանուր Միութեան Վարիչնե-  
րուն հետ:

ԲԱՐՈՅՑԱԿԱՆ.— Տամ և մէկ անընդհատ տարիներու  
պաշտօնավարութենէ մը յետոյ, որուն հրաւիրուեցայ  
Պոլիսէն և զոր արդիւնաւոր և օգտակար ընծայելու  
համար ոչ մէկ ջանք պակաս թողուցի, Բարեգործականի  
Գործադիր Ժողովը զիս գաղրիւցոց վերջին անգամ իր  
մօտ ունեցած կրկին պաշտօններէս ( Քարտուղարութիւն  
Կրական եւ Ռեբախնամ Յանձնաժողովի եւ Հաօու Եխու-  
զութիւն Կեդրոնի ) զանոնք ջնջուած յացարաբելով, 1  
Փետր. 1923էն սկսեալ, և ինծի խոստանալով «արդար հա-  
տուցում » մը, որ սակայն չտիտագանց հեռու էր արդար  
ըլլալէ և արժանացաւ իմ ուժգին բողոքիս միայն:

Թէ այս պաշտօնանկութիւնը սառութիւն հետեւանքն էր  
պաշտօններու ջնջումին, այս վերջինը անհրաժեշտութիւնն  
մըն էր և թէ 11 ամեայ ոշխատաւորի մը, որ կրան-  
ւած իր պաշտօնին պարտականութիւններէն՝ ոչ տեղական  
լեզուն կրցած էր սորվիլ և ոչ ալ տունին ու պաշտօ-  
նառուելիին սահմաններէն անդին ծանօթութիւն հաստա-  
տել, կարելի չէ՞ր միմէտ տարբեր պաշտօն մը ասո՞ւ ի  
հարկին զեղչուած ամսաթոշովալ մը, և անհրաժեշտութիւն

մըն էր իր ընտանիքի վեց անդամներով միասին փռ-  
ղոց նեսելը առ այժմ չեմ ուզեր առանցմով զբաղել, զբ-  
շատ աւելի կարեւոր պարագաներ կան, որոնց վրայ ա-  
ռաւելապէս կ'ուզէի հարաբիրել ձեր բարձր ուշադրութիւ-  
նը :

Կեդր. Վարչ. Ժողովի Դիւանը չի վարանեցաւ իր  
պաշտօնասեղիին մէջ իսկ անուանարկել զիս և 24 տարինե-  
րէ ի վեր աղջային շրջանակներու մէջ պարկեցածը էն-  
և խղճմարքէն ունեցած պաշտօնավարութիւններս կաս-  
կածի տակ ձգել և իր ճակտին քրտինքովը միայն ի-  
րեններուն ապրուասը հոգացող համեստ մարդու մը մա-  
քուր ճակատը մ'ըստել :

Արդարեւ, այդ Դիւանը 26 Հոկտ. 1920ի օրը, Բա-  
րեգործականի խորհրդասենեակին մէջ, զիս կը հոչակէր  
որպէս զեղացար, խորող եւ գող, առանց անշուշտ  
խղճանարելու թէ կրնայի պաշտօնական հանդամանք ու-  
նեցող այդքան կարեւոր մարմնի մը նմանօրինակ ծան-  
րակիու վերադրումներու տպաւորութեանը տակ անձ-  
նասպանութեան դիմել և յաւէտ անպատիւ անուն մը  
ձգել, ինձմէ վերջ նաեւ ընտանիքիս և զաւակներուս :

Եթէ այդպիսի ցաւալի վախճան մը չունեցայ, ինչ  
որ միծ բախտաւորութիւն մըն է անշուշտ ինձի և զա-  
ւակներուս համար, ունեցայ սակայն ընդհատարար շա-  
րունակուած մտալլկումներ տագնապներ և նուազում-  
ներ, մէկ երկու անդամ նոյնիսկ պաշտօնատեղւոյն մէջ,  
աշխատաւութեանու գրասեղանին առջեւ : Զի միտքս չար-  
չարող ամենաէական պարագան այն էր թէ ի՞նչպէս  
կարելի էր որ Բարեգործական հաստատութեան մը  
վարիչները ըլլային ա'յս աստիճան անսիրա և անգութ :

Զիս ամբաստանութեան արժանացնող պարագան  
ըստ երեւոյթին եթէ ներկայացնէ իսկ ինձի անհպատ

կողմեր, անոր յարակից մանրամասնութիւնները սակայն  
ո՛չ թէ միայն բոլորովին հեռու կը վանեն ամէն կաս-  
կած, այլ յաւէտ իմ անմեղութիւնս կը հաստատեն, ինչ-  
պէս անշուշտ նաև թէ՝ զիս անուանարկողները կարի՝  
ապիկար մարդիկ են, եթէ կիրքէ առաջնորդուած չեն:

Կեդր. Վարչ. Ժողովի դիւանը ինձի յայտարարեց  
թէ փոխ գանձապիտ Տօքթ. Ն. Քէչէճեան 20 Հոկտ.  
1920ի օրը եկած քննած է իմ պատասխանատուութեան  
ներքեւ գանուող գրամարկովին վիճակը և պակաս գտած  
է, ասիկա ուրիշ բան չէ բայց եթէ զեղծում, խորում  
և գողութիւն, որուն համապատասխան պատիւն է պաշ-  
տօնէ հետացում և օրէնքի իւխտ արամարդութեանց  
յանձնում: Դիւանը սակայն նկատի առնելով որ բազման-  
դամ ընտանիքի հայր եմ և Բարեգործականի երկարամեաց  
պաշտօնեաց կը խնայէ ինձի, չի յանձներ զիս օրէնքի խը-  
տութեան, այլ կը բաւականանայ հետեւեալներով . —

1.— Առնել ինձմէ դրամարկով եւ արկլակալութեան  
պատօնը:

2.— Այդ պատօնին փոխարէն ինձի յանձնել երկու  
հարուղարութեան պատօններ, Կրք. եւ Ուք. Յանձնա-  
խումբին եւ Գանիրէկի Մասնաժողովինը:

3.— Զեղչել ամսարուակիս 250 հ. դ., իրեւ ՊԱ-  
Տի կամ ԽԲՍ:

Դիմել տուի Դիւանին ամսիջապէս թէ՝ առանց ամ-  
բաստանեալը լսելու, կամ պատճեռութիւն ընծայելու որ  
բացարութիւն տայ, իրենց կայացուցած այդ փութկոտ  
որոշումը առնուազն ապօրինի էր, որուն գէմ բոլոր ու-  
ժուլս կը բողոքեմ և երբեք չեմ կրնար ընդունիլ:

Դիւանը իր այս որոշումները ինձի հաղորդելէ ա-  
ռաջ սակայն, Տօքթ. Քէչէճեանի միջոցաւ, ինձի երկիցա

թելագրած էր որ գրամարկղին մէջ պահուս դանուած գումարէն զեղչեմ կանխսիկ գումանած մէկ ամսաթոշակու և մնացեալը տեղը դնեմ: Տօքթ. թէչէնեան կը խոսանար այս պարագային ճիշդ հոչակել գրամարկղի վիճակը և ինձիքը փակել:

Նաեւ Դիւանին առենալպիքը, որ Բարեգործականի Ընդհ. քարտուղարն էր միանդամայն, քանիցս ինձի առաջարկեց իր անձնականին փոխ տալ պակած գումարը: Ես այս երկու առաջարկներն ալ մերժեցի, որովհանունչէ միայն Բարեգործականի դոյզն վնաս մը պատճառելու մասգրութիւն գոյութիւն չտնէր եղածին մէջ այլ ընդհակառակը անիկա արդիւնք էր փսխադարձ վասահութեան և անդիք համացողութեան մը, որ ասրիներէ ի վեր կը գործադրուէր:

Արդարեւ, եթէ ակնտրկ մը նետուի առօրկայ ընթացիկ ծախքերու առաջին առմարին էջերուն վրայ, 1915 կամ 1916 չքանին, պիտի ակնտրի որ ինձի արտադրուած վարկը 20 սոկիէն բարձրացած է մէկ անգամէն 50 սոկիի: Այս վարկի բարձրացումը ինքնարբար չէ կատարուած: Անիկա հետեւանքն է իմ մէկ ինդրանքիս, որպէսզի կանխսիկ վճարուին իմ ամսաթոշակներս: Իսկ այս ինդրանքս հիմնուած էր երկու պատճառի վրայ: առաջին պատերազմի հետեւանքով կեամբը կը աղեր օրէ օր եւ ամսարուակու բարձրացում չէր կրեր, երկրորդ՝ որ Ընդի, բարուղարը եռամսեայ կը գանձեր իր ամսարուակները: Ամսաթոշակու կանխսիկ գոնձելով փոքր ինչ զիւրութիւն ունեցած պիտի ըլլայի: Հաւանութիւն չարուեցաւ ինդրանքիս: Բայց ինձի արամագրուած վարկը 20էն 50ի բարձրացուեցաւ, այս կերպով լրիկ համամտութիւն յայնուելով անշուշտ որ իս կանխսիկ գանձէի ամսաթոշակու, զոր կ'ստացագը-


րէի ամսուն վերջը, որով և իմ պարագաս չէր կրնար օրինակ ծառայել միւս պաշտօնեաներուն և նախընթաց մը ստեղծել: Խնդրոյն այս կերպ կարգագրութիւնը օրինական ոչ մէկ համգամանք կը ներկայացնէր, այլ պարզապէս տեսուկ մը ընտանեկան կարգագրութիւն էր, որ ոչ ոքի վնաս չէր պատճառեր և ինձի կ'ընծայէր դիւրութիւն:

Դանձապետին յատուկ տոմարներն ես ցոյց կուտան թէ իմ ամսաթոշակներս մէկէ աւելի անդամներ վճարուած են ինձ սրաշտօնապէս՝ ամսուն սկիզբը կամ մէջ տեղերը:

Արդ, այս իրողութեանց հետեւողութեամբ է, ինչպէս նաեւ արկղակալի յատուկ անձնական պատասխանառուութեամբս, որ ես միշտ շարունակած եմ մինչեւ 1920 վերջ, կանխսիկ սամանալ ամսաթոշակներս և զաննք ստացագրել ամսոյն վերջը:

Նկատի առնելով այս պարագաները դուք դժուարութիւն պիտի չի կրէք հաստատելու թէ ինձի վերագրուած ծանրակշիռ և ոճիրի համազօր ամբաստանութիւններն ունէ արդար հիմք չունին և ես Բարեգործականին ամենաուզոյն վնաս պատճառելու միաք չեմ ունեցած երբեք, այլ ընդհակառակը 1912է մինչեւ 1920 վերջ իմ կատարած դրամական 1000 տոր ոսկիներու գործանութիւնները բավանդակող երկու տոմարները բացարշապէս կը հաստատեն թէ յոյժ կանոնաւոր արձանագրութիւն մը պահած եմ և հաշիւներս յանձնելու օրս Միլելի մը բաց կամ հաշուական ասրբերարին չեմ ներկայացնուած:

Ինչ որ կեզր, Վարչ, Ժողովի Դիւանը 25 Հոկտ. 1920ի օրը կ'որակէր ա'յնքան թեթեօրին, ուրիշ նշանակութիւն չունէր՝ բայց եթէ հետեւեալը, իրեւ պա-



Կառ գտնուած 20 Հոկտ.ի օրը դրամարկղին մէջ.—  
1920 Հոկտ. ամսաթոշակս, գանձ-  
քըւած ամսուն սկիզբը, սասցագը-  
րելի 31ին ե.դ. 2750.—  
1920 Նոյ. ամսաթոշակս, գանձը-  
ւած ց20 Հոկտ. փոխանակ 1 Նոյ.ի 2750.—  
1920 Դեկտ. ամսաթոշակէս թեր-  
հաշիւ գանձուած ց 20 Հոկտ. 700.— 6200.—

Այս գումարները մաս առ մաս առած եմ յաջոր-  
դաբար, իմ տարելիքը մնի բաժեշտ և բացառիկ պէտ-  
քերս հոգալու համար, և իւրաքանչիւր դրամ առնելուս՝  
համապատասխան ստացագիրնութեր դրած եմ դրամար-  
կըլին մէջ՝ իրեն պատրաստ դրամ հաշուելու և ամ-  
սեղիսուն օրինական սասցագըրիս հետ փոխանակելու  
համար։ Թէ՛ իմ ստացագիրնութերս և թէ հաշուակա-  
լին Հոկտ. ամսաթոշակի հաշույն երկու առեւմեայ  
ստացագիրները նոյն քննութեան պահուն իսկ դրամար-  
կըլին մէջէն հանելով մի առ մի ցոյց տուած եմ Տօքթ.  
Քէչէճեանի՝ համապատասխան բացարութիւններով։

Բացի այդ, առօրեայ յուշագրութեանց յասուկ ձե-  
ռատեարի մը մէջ, զոր պատրաստ եմ ուղուած ատեն  
ներկայացնելու, թուականներով նշանակած եմ պարբե-  
րաբար կատարած ստուգումներս, հաստատելու համար  
դրամարկղի վիճակին ձշութիւնը և հոն իմ անունիս  
դիմաց, ինչպէս ուրիշ անուններու, նշանակած եմ մին-  
չեւ այն օր անձնականիս համար դրամարկղին տուած և  
հետեւաբար անոր պարտական եղած գումարներու։

Այս ձեռաւահարը ևս նոյն քննութեան օրը ցոյց տը-  
ած եմ Տօքթ. Քէչէճեանի  
Կը ահսուալի շատ որոշապէս այս տուեալներէն անշուշտ

թէ անհաւատարմութեան, գեղծումի, խորումի, գողու-  
թեան (ծանրակշիռ վերագրումներ, զոր ինծի ուղ-  
ղելու չի վարանեցաւ և իրը այն մելմ պատիմներ ալ-  
անօրինեց ինծի կեդր. Վարչ. Ժողովի Դիւանը) ամե-  
նադոյզն փաստ անդամ գոյութիւն չունի իրականու-  
թեան մէջ և ես զոհը եղած եմ պաշտօնական մարմնի  
մը կամայականութեան և քմահաճոյքին, որ անգիրէն  
վասահամբաւեց զիս և իմ ու ընտանիքիս անրասիք  
պատիւը արատաւորեց, որուն հնտեւանքով ինծի անկա-  
րելի եղաւ ուեէ սրաշտօն գտնել։ հակառակ կատարած  
դիմումներուս և լրագրական ծանուցումներուս։

Սհաւասիկ այս է ինդրոյն բարոյական կողմը, զոր  
արժանաւորագէս նկատողութեան առնել և ըստ այնմ  
ինծի պատճառուած զրկանքն ու վասահամբաւութիւնը  
փոխարինել տալու պարագան խոնարհաբար կուգամ  
յանձնել Պատկ. Դատարանիդ. խղճամիտ արգարադասու-  
թեանը, այնպիսի եղանակաւ մը որ կեդր. Վարչ. Ժողո-  
վի ատենագրութեանց մէջ իմ անունիս շուրջ եղած  
վաստակած գոյցի սպառ ջնջուխն և կասկածի  
ուեէ հետք չի մնայ։

Անցնելէ առաջ ինդրոյն նիւթական մասին, աւե-  
լորդ չեմ նկատիր յիշատակել նաև քանի մը ոչ նուազ  
կարեւոր պարագաներ, որ կրնամ իրեւ լրացուցիչ լու-  
սաբանութիւն ծառայել Պատկ. Դատարանիդ։

1.— Նկատելով որ մասնաւոր զիտում մը կոյ ինդ-  
րոյն մեծ կարեւորութիւն մը տոլու և իմ պարկեշտու-  
թիւնս կատակածի ենթարկելու, երկու օր վերջ, 22 Հոկտ.  
1920 ամսաթիւ եռամսնեայ (Հոկտ.-Դեկտ. 1920) ամսա-  
թոշակներուս փոխարէն ստացագիր մը ստորագրեցի և  
Ընդհ. Քարտուղարին ուղղեալ երկտողով մը ինդրեցի  
բացառաբար մէկ անգամի համար կանխավճար մը

Ծնել, որպէսզի մէկ անգամէն փակեմ ամէն առկախ հաւաք և այլնդայլոյ թիւրիմացութեանց տեղի չի մնայ:

Այս խնդրանքս մերժումի արժանացաւ և ստացուիրս 3 օր վերջ ինձի վերադարձուեցաւ:

2.— Դիմել տուի թէ ինձի զգուշական ո՞չ մէկ թերադրութիւն եղած էր, ո՞չ մէկ ազգարարութիւն տեղի ունեցած էր և այսքան անհշան ու անհեթեթ պարագայ մը յանկարծ մեծ կարեւորութիւն կը ստանար և զիս դասպարանու կը ծառայեցուէր: Զի լսուեցաւ:

3.— Նոյնիակ արկղակալի պաշանին յատուկ համանութե, զոր առ ի կանխանովութիւն ի՞մ կողմէ եղած պահանջի համաձայն ինձի յանձնուեցաւ, չի ներկայացներ, չի պարունակեր ուեէ տրամադրութիւն, որ արդիէ արկղակալը թերհաշիւ վճարում ընելէ պաշտօնեաներուն՝ օրինաւորութեան ստամանին մէջ, այսինքն փոխան առժամեայ ստացագրի:

4.— Իսկ Բարեգործականի շրջանակին մէջ գոյութիւն ունենալով հանդերձ ազգարարութեանց և սպառնալիքներու անհաշիւ պարագաներ, պատշէ կամ դատապարտութիւն երբեք տեղի չէ ունեցած, այնպէս որ իմ պարագան կարելի է նկատել առաջինը, գուցէ և վերջինը, ինչ որ իր վրայ կը հրաւիրէ լուրջ ուշադրութիւն և մանրազնին քննութիւն:

5.— Ասանց երբեք ամբաստանեալը լսելու, ի բացայութեան և յանդէտա անոր, իրենց կայացուցած այլքան խիստ և ծամբակչիո որոշումներուն դէմ ուժգորէն բողոքելու և ի սպառ անընդունելի յայտարարելու վրայ միայն պատեհութիւն արուեցաւ ինձի ինքնինքս պաշտպանելու: 30 նոյ. 1920ին, Կեդր. Վարչ. Ժողովի անդամներուն ներկայութեան, կարգացի պաշտպանականս, ուր ամփոփուած էին վերը յիշտակալուած

վաստերը՝ կարելի մանրամասնութեամբ, ու միակ օրինակ մը ըլլալուն հակառակ, վայրկեան մը իսկ չի վարանեցայ օրերով և շաբաթներով իրենց մօտ թողուլ խորհրդական անդամ Տ. Ճանիկ Չաղըրի կողմէ յայտնըւած փափաքին համաձայն և որուն մէկ պատճենը պատրաստ եմ ի հարկին արամադրել Պատկ. Դատարանիդ: Արդիւնքի տեսակէտով սակայն այդ պաշտպանուզականս ալ չի զօրմց փափոխութիւն մտցնել կանխաւկայցուցած իրենց խիստ որոշումներուն մէջ, զոր ինձի հարկագրեցին անողոքաբար: Վատոհ Պատկ. Դատարանիդ անկողմնակալ և անալիկա արգարադատութեանը, և միշտ պատրաստ իրեն ներկայացնելու ամէն բացապըրութիւն և լուսաբանութիւն որոնց պէտք ունենաց ուեէ ժամանակ, բաւական կը նկատեմ վերը մանրամասնուած փաստերը և կ'անցնիմ այս ցաւալի ինդրոյն նիւթական մասին:

\* \*

ՆԵԽԹ-ԱԿԱՆ.— Ինձի համար ուեէ կասկածէ վեր է թէ Բարեգործականի Գործադիր ժաղովը զիս հրաժարեցնելով, 31 Յունիւր 1923ին՝ իր մօտ ունեցած կրկին պաշտօներէս, պարկեշտութեան և խղձմտութեան հակառակ գործ մը կատարած է, պարզապէս դաւաճանած է իրեն վատահուած պաշտօնին գէմ, զի իմ կրկին պաշտօներս ջնջուած հոչակիւլը պատրուակ մըն է լոկ իր արարքը չքմեղացնելու և երեւոյժները փրկելու համար, ինչպէս որ պիտի տեմուուի: Թէ՛ իմ պաշտօնավրկութիւնս և թէ ինձի վերագրուած ծանր ամբաստանութիւնը արդարացուցիչ ուեէ հիմք չունին: Իրեւ հանրօգուտ կազմակերպութեան մը վարիչները և աշխատաւորներու ու պաշտօնեաներու հանդէպ գոյզն բարեացակամութիւն ունե-

ցող բարոյական անձնաւորութիւն, անոնց պատիկ մեկ քեւ ալրութիւնը բաւական պիտի ըլլար որ իրենց ուզած պայմաններուն մեջ սպահուեր դրամարկը և մի անգամ ընդ միւս գոյութիւն ունենալէ դադրէր՝ ինչ որ իրականին մէջ թերեւս ոչ իսկ պղտիկ թերութիւն մըն էր և ինչ որ սակայն իրենց կողմէ նշաւակուեցաւ որպէս ծանրակիւս յանցապարաւութիւն :

Անոնց այս արարքը բացատրելու համար ակամաց կը տարսւիմ մտածելու թէ անոնք ինծի դէմ լարուած էին՝ տարիներ առաջ տեղի ունեցած մէկ երկու միջադէպնիք, և որչափ ալ ջամացած ըլլամ ոքօղելու իրենց դժգուութիւնը, զոր իրենց առթելու ոչ մէկ մտածուը ունեցած եմ սակայն, այնուամննայնիւ կարգ մը երեւյթներս վրայ հիմուելով ևս կահած եմ թէ թաքուն ահածութիւն մը կը անուցանն ինծի դէմ և առիթի կը սպասն իրենց վրէժը լուծելու:

Այդ միջադէպնիքն առաջինն է իմ ունեցած բուռն բոլոքս Տ. Միքան Ղազարաստանի դէմ, 1917 ին, երբ խորհրդական անդամ էր կեդր. Վարչ. Ժողովի մօտ և յետոյ 1921 ին եղաւ փոխառանապետ Գործադիր Ժողովի, երբ կեղլ. Վարչ. Ժողովը հաստատուեցաւ Բարեգի մէջ:

Օր մը, Պաշտօնատեղոյն մէջ, իմ գրասեղանին առջև գտաւ զիս յիշենլը առօրեայ աշխատութեան մէջ և համարձակեցաւ ինծի ուղղել անհարկի և անիրաւ կշատրանք և զիս կոչել «Հաէպախլ» (անհերթ): Որչափ ալ համաստ պաշտօնեայ մը եղած ըլլայի, մարդ էի վերջապէս և ոչ առրուկ մը, որպէսզի կարենայի հանդուրհել և համակերպիլ այսքան խիստ և անիրաւ յարձակումի մը: Յիշեալը զիս կ'ամբաստանէր իրեւ իսքանդրուխ գործող և ոչ ոքի խորհուրդ-

չի հարցնալ պաշտօնեայ մը: Այս վերագրումը չափազանց անիրաւ էր, որովհետեւ ևս, իրեւ գիւանապետ, ենթակայ էի ունմիջական հրանանգներուն և թերագրութեանը Ընդհանուր Քարտուղարին, որ կեդր. Վարչ. Ժողովի առնեագույն էր միանգումայն և մշտնշնչապէս զայն կը ներկայացնէր Պաշտօնատեղիին մէջ: Այդ անձը կը կոչուէր մէթք վ. Մալէզեան, զոր ճանչցողերը քաջ գիւան թէ բնու երեւք չէր թոյլասորեր որ առանց իր հրանանգին ու զիսութեան տերեւ մը շարժի Պաշտօնատեղիին մէջ, եթէ երեւք ենթագրենք իսկ պահ մը թէ ևս կրնամ տառի եղած ըլլալ ինքնազգութեան մը ընկելու:

Ահա այս պայմաններուն մէջ էր որ յիշեալ խորհրդագործնը կուգար ինծի անիրաւ վերագրումներ ընելու և նախատելու: Աւասի փութացի իր ետեւէն քայի սկսակը, ուր կը գտնուէին նոյն պահուն Տեազք վ. Մալէզեան և ողբացեալ Արշակ Ֆերմաննան և իրեն ըստ «բարգանիով ձեզի կը վերադարձնեմ ան բառը զոր ինձի ուղղեցիք, ուովնետեւ ինձի չի յարմարի»:

Եւ որովհեաւ կրնար այդ միջուդէպը ծառայել երերեւ ոգեղ նոփունթաց մը նաև ուրիշներու, չի բաւուկանացայ այդչափով, 31 Մայիս 1917 ամսաթիւ բողոքագիր մը ներկայացուցի Կեդր. Վարչ. Ժողովի փոխառանապետին, այն առնեն Վահմ. Յագուլ Արթին Փաշա (յաւէտ ողբացեալ աղնաւական միծ անձնաւորութիւնը):

Զիմ կրնար սարակումաի երեւք որ Տ. Միքան Ղազարաստան այն թուականին մինչեւ այսօր լարուած է ինչի դէմ և առաջնուղապէս իր խորհրդականի և յետոյ փոխառանապետի հանգամանքները չարոչար գործածելով, իր ընկերներուն մօտ աննոպաստ արտոյացուած է

Իմ մտախա և անոնց միտքերը նախապատրաստած է հետքեաէ լնձի դէմ:

Երկրորդ միջաղէպը տեղի ունեցած է հետեւալ պարագաներուն մէջ:

Որպէս հանրօգուա հաստատութեան մը պաշտօնացած էն միշտ ջանացած եմ իմ կարողութեան և տարզութեան առաւելազայն չափը սիրայօժար նուիրել պաշտօնիս պարասկիսութեանցը: Աևօրիայ պարտառը աշխատութեան համար 8 և 7 ժամ որոշուած էր ձմեռուան և ամսառուան եղանակներուն մէջ: Բայց գործին համար իմ ունեցած սէրս և եռանգս զիս կը զամէին աշխատութեան գրանիդանին՝ մեկնուամի համար նշանակուած պահերէն մինչեւ 1-2 ժամ վերջ ընդհանրապէս, թէ՛ կէսօրին և թէ գիշերը: Այս պարագան ու եւ ժամանակ սննդիմէրի փաստերով և վկաներով հաստատելու պատրաստ եմ:

Միշտ ջանացած եմ նուե որոշեալ պահերուն ներկայ զանուիլ պաշտօնիս գլուխը, թէ՛ աշխատութեանց կարենալ համար լու և թէ ուրիշ պաշտօնեաներու օրինակ համդիսանալու համար, ինչպէս կը հաստատեն ներկայութեան յասաւկ տոմարները, որոնք ինամով պահուած են Պաշտօնատեղի գիւտնասան մէջ:

Բարեգործականը ինսայիլու համար ջանացած եմ աշխատութեան մեծագոյն բաժինը ստուճնել սիրայօժար և Պաշտօնատեղի մանելէն մինչեւ մնկնելու պահու բոլոր վայրիեաններու և մտածումներու նուիրել, լարաւած ուշադրութեամբ, պատասխանատու առօրեայ աշխատութեանց դոր վասահ եմ թէ իմ տեղս ուրիշ մը պիտի կաստարէր օդական մը աւելի պահերով միայն:

Ինքինքիս թոյլ չեմ տուած ոււէ ժամանակ սննդաման աշխատութեամբ զբաղի կամ բարեկամներու

հետ տեսակցիլ, խորհելով որ տափկա տեսակ մը խորուամ եղած պիտի ըլլայ Բարեգործականի նուիրուած պահերէս:

Միակ ակնկալութիւն մը ունեցած եմ: Որ Բարեգործականի Վարիչները զիւնամն, տեմնն և ինքնաբերաբար զնանատան: Այսպիսի զնանատութիւն մը միայն ինձի հաճոյք պիտի պատճառէր, որովհետեւ պիտի ապացուցանէր թէ գիսողներ և զնանատողներ կան:

Իմ ակնկալութիւնն մէջ չըրաչար խաբուեցաց և սակա ամէնէն աւելի ցատ պատճառած է ինձի: Ինքնինքն միաթաշած եմ անով միայն, որ իմ ջանքերս և նուիրուած յատկացուած էին աղէտեալներու, թշուառներու, որբերու են:

Բայց երբնկառած եմ թէ երկու չափ և երկու կշիռ կը գործածուի և ինձմէ զատ միւս պաշտօնեաները կը քառակարտին, ըստ որում կը ինդրեն, կը թափանձնեն, չեմ կրցած հանդուրմել և զանազան ասիթներով արտայացուած եմ բիրանացի և գրաւոր, ցայց սալով խափերը և սիսալը որ գործուելու վրայ է: Իմ այս արտայացութիւններա տուաւելապէս հանրօգուա հաստատութիւն մը իր լուրջը թեան վրայ տեսնելու փափաքէս և նախանձախնդրութիւնէս տուած կած է: Սակայն սննոր սիսալ մեկնութիւն արտած է: Կարծուած է թէ իրենց վարչական իրաւանցը միջամտութիւն կը կատարեմ, ուստի սակազծած է անձութիւն և այլընդայլոյ վերալըրումներ կատարուած են ինձի դէմ, իմ այս կեցուածքիս համար, կեզը վարչ, ժողովի կազմէ, որ քանից ազգարարապէր ուղղացած է պաշտօնէութեան, ուշ գալու, բացակայելու, ներքին գաղտնիքներ գուշար տարածայնելու են, ամբաստամութեամբ, տանց երբեք յանցաւորը մատնանշելու և ուղղակի պատասխանատութիւն հրաւիրե-

Առև, այլ միշտ իր աղքարարագիրներուն տարտվ ընդհանուր բնայթ, որ երբեք ուղիղ չէ անշուշտ, որովհեած յանցուորին հետ կը դասուի նաև ամսմաղը, որ իրաւումը կը զգածուի և ինքնինքը անիրաւ վերադրումներու ենթարկուած կը դրայ:

Ես ի հարկէ միշտ բողոքող եղած եմ նմանօրինակ անիրաւ վերադրումներու համովէպ, երբ ուղղուած է ինձի, երբեմն՝ երբ ուղղուած է ընդհանուր պաշտօնութեան: Ասոնցմէ մէկը հարկադրուած եմ կեդր. Վարչ. Փողովին վերադրձնել 4 Մարտ 1916ին, անոր կցելով իմ արդար գիտութիւններս և ցուս յայտնելով:

Ես պարագանութիւնն նկատու եմ այս վես ընել որպիշտեւ չեմ ուղան որ զիրէնք յարգելու մասնութով շատ հեղ ամենաուշանք թողուլ յանցուորութիւն ընդունի մեկնուի իրենց կումէ և մանաւանդ միշտ փափոքած եմ որ Բարեգործականի նման հանրօգուու հաստատութիւնը իրեն համբաւին արժուավայել վարչական գործելու կերպ ունենայ:

Միւնցին փափոքէն առաջնորդուած և մանաւառագէս պաշտօնէութեան իրաւանցները պաշտպանելու պարագանութիւնէու մղուած թերագրած եմ թերագրի և գրաւոր թէ եգիպտակի կիլմային համար մատաք աշխատութեան յատկացուած օրական 8 և 7 ժամենքը շատ հետ պէտք է չափաւորն և պատշ մանաւանդ կէտ օրէ վերջ աշխատելու պարագաղը թիւնը բարեփոխնել, եւս կեդր. Վարչ. Փողովի հանովէպ ի՞ այս կեցուածքու բակարն, որուն բնայթն ու հանգամնաքը պարզեցի, երբեք չէ աղքած գործին նուիրուելու և ի՞ լուսպոյնա ընելու ևսանդիա վրայ, զոր բացառիկ պարագայ մը պէտք է նկատել և ամէն պաշտօնեայէ ակնկալել ոչ ուղիղ է և ոչ կարելի՝ գործնականին մէջ :

Կ'անդիսանամ թէ իմ այս ընթացքս ի՞նչ չափով աղդած է պաշտօնեաներու ամսաթոշակները աւելցնելու առթիւ նկատուած խարականութեան վրայ : Բայց փաստ է թէ 1912 նոյ.է մինչև 1914 Մայիս, երեք պաշտօնեաներու թոշակներուն վրայ կատարուած յաւելումները կը ներկայացնէին համեւեալ համեմատութիւնները .— իմ՝ 19.6 0/0, ուրիշի մը 66.6 0/0, իսկ երրորդի մը՝ 100 0/0 :

Մէկէ աւելի փաստերով կարելի է ապացուցանել թէ այդ միւս երկու պաշտօնեանները ոչ մէկ բացառիկ արժանիք կամ առաւելութիւններ կը ներկայացնէին :

Ես արտակարգ խարականութիւնը և աշառութիւնը հանրօգուած հաստատութեան մը մէջ՝ երբեք ներելի չէր, ով կաք ո՛րմնք ևս եղան ըլլային հեղինակները : Իմ պարագանութիւնն նկատեցի յաւելումներու այդ համեմատութիւնը ներկայացնող մէկ մէկ յուշադիր յանձնել գանձապես Տ. Մ. Անդրամնիկեանի և Խորեգորկան Տ. Մ. Պարագանեանի, 13 Յուլիս 1914ին և 24 Հոկտ. 1914 ամսաթիւ նամակով մը ևս՝ տանհաւդպիր և Ընդհ. Քարտուղար Տ. Վ. Մալէզեանի :

Մնացին անհետեաննը :

Մինչև Յուլիս 1917 ուեկ յաւելում չի կատարուեցաւ իմ ամսաթոշակիս վրայ, հակառակ նոյնիակ այն իրողութեան թէ՝ 1916 է սկսեալ ես զրկուած էի նաև միակ օդնականի մը ներկայութիւնն և բոլորվին միանակ կը տանէի աշխատութեան բավանդակ ծանրութիւնը :

Իմ մորթիս վրայ կրելով զնահատութիւն և քաջարելութիւն վերէն, հաստատութեան վարիչերէն, պատմելու զմակակ և ինձի համար չափազանց սննդաբան հետեւանքները, պատերազմին հետեւանքով օր քան զօր շեշտուած աղբութիւնները և 6 անդամէ բազ-

կացեալ ընտանիքի մը ծանր լուծը, ևս հարկադրուեցաց մէկդի զնել ամէն փափկանկասութիւն և ամսականի յաւելում պահանջել յաջորդաբար, կարելի ուժգնութեամբ, որուն հետևանքով իմ ամսաթոշակս բարձրացաւ 1917 Յուլիս ցՅունիս 1920, պարբերաբար կատարուած յաւելումներով 14 է 27,50 սոկիի, ինչ որ սակայն բաղդասելով առնուազն եռապատկուած ապրուստի որդութեան հետ, ոչ ուեւ համեմատութիւն կը ներկայացընէր և ոչ ալ ամսաթոշակի իրական յաւելում կամ քաջարերութիւն: Եւ մասածել թէ ևս Պոլիսէն պաշտօնի կոչուած էի 1912 Հոկտ.ին 12 սոկի ամսաթոշակով, երեք ամիս յետոյ գոհ մնալու պարագային յաւելումի խստառումով, յաւելում, որ կատարուած էր շորջարի մը յետոյ միայն, 12 սոկին 14ի բարձրացուելով և այդ գումարը անփոփոխ պահուած էր մինչեւ Յուլիս 1917 . . . :

Այդպիսի գմագակ գրութեան մը և պայմաններու մէջ էր որ և 1 Յունվար 1919 ին, յատուկ գրութեամբ մը ինդքեցի Կեդր. Վարչ. Ժողովէն որ ամսաթոշակս բարձրացնէ 30 սոկիի, որպէսզի ևս կարենամեթէ ոչ բարեկեցիկ, գոնէ պաշտօնիս և գիրքիս բաղդասմամբ չափաւոր ապրմակերպ մը ունենալ, եօթանամեայ անընդհան պաշտօնավարութիւնէր յետոյ: Այդ գրութեան մէջ անկեղծօրէն աւելցուցեր էի նաև « իսկ եթէ անկարելի նկատէք գոհացում տալ իննդրանքիս, թոյլ սաւլ որ ազատ ըլլամ հրաժարելու պաշտօնէն՝ անմիշապէս յետոյ որ դէպի Պոլիս երթելութիւնին վերսկին»:

Իմ այս ինդրագրիս պատասխանեց գանձապետ Տ. Անդրանիկեան, 2 Յունվար 1919 ամսաթիւ գրութեամբ մը, որով ինծի կը հաղորդէր թէ կարելի պի-

առի չըլլայ ներկայիս և ապագային ուեւ յաւելում քնել, ազատ կը թողուն և զիս չեն կաշկանդեր « որքան ալ մեղի համար ցաւալի ըլլայ զրկուիլ ձեր հաւատարիմ և անձնուեր աշխատութիւններէն են ըսկլով » :

Դիւանին կողմէ Տ. Գանձապետին ինծի ուղղած այս գիրը կը պարունակէր սակայն միեւնոյն առեն կարգ մը վերագրումներ և մեղաղբանքներ, որոնք անիրաւէն և որոնց արժէքը ճշգելու համար պարագանութեամբ կը գողացնի ուղղել 7 Յունվար 1919 ամսաթիւ գրութիւն մը, որով մի առ մի կը հերքէի ակնարկուած մեղաղբանքները և ընդհակառակը զիրենք կ'ամբասատնէի, յիշատակելով անհերքելի փաստեր և ապացոյցներ, և ըսկէ յետոյ թէ կը նային վսահ ըլլալ որ այնուհետեւ այլևս իմ կողմէ ամսականի յաւելում պահանջող ուեւ գիրում պիտի չի կատարուեր իրենց մօտ, — որովհետեւ այդ բանը կարի դմբակ եր ինձի համար եւ ենակ մը նուասացուցիչ հանգամանի ուներ, մինչեւ այն օրը ուր ինծի համար կարելի պիտի ըլլար ծրարներս կապել և Պոլիս վերադառնալ, կը վերջացընէի հետեւեալ առողերավ. — « Եւ որովհետեւ անիրաւ պիտի ըլլայի մտածելով որ բացակայ ժողովականներն ալ կը նան բանել Պատկ. Դիւանիդ հայեցակեանները, մանաւանդ անո՞ր համար որ օր մը չի ըստի թէ իրենք անտեղեակ էին այս մասին, ներկայ պատասխանագրէս մէկ պատճէն կը զրկեմիրենց ևս առ ի գիտութիւն» :

Այս պատճէնմէրը ևս զրկեցի Վահմ. Նախագահին, Պօլսս նուպար փաշայի, Բարիզ, Փոխառանապետ և. Ազաթօն պէյի, Ժընէվ, Խորհրդական Տեարք Տիղբան իսն Թէլէկեանի և Տիրան Փիլիսոպանի, բայց ճիշդասան օրեր վերջ միայն, որու ընթացքին բելանացիք կամ գրաւոր ոչինչ ըստեցաւ ինծի :

Ես յետոյ իմացայ անպաշտօն և բոլորովին անուկընկալ կերպով որ Վահամ, Փաշան հետեւանք տուած էր անոր և մասնաւոր նամակով մը յանձնաբարած որ գոհացում տրուի ինձ : Այն ատեն ես բոլորովին նամողուեցայ թէ Վահամ : Նախազահը հեռուեն հեռու չատ աւելի յատակ կը տեսնէր և կը դիմէր իրերը , քանի իր գործակիցները հոս , մօտէն :

Վահամ . Նախազահի այդ յանձնաբարութեան համաձայն , առանց երբեք իմ կողմէ ուեւէ ինսդրանք կամ դիմում կատարուելու , երկու անգամ ամսականի յաւելում առացայ : Առաջին Սեպտ . 1919ին , երբ կը դըոնուէի տակաւ ին դիմանապիտի պաշտօնիս մէջ , ընդհանուր պաշտօնէութեան հետ միաւին Երկրորդ՝ Յունիս 1920ին երբ ինձի առաջարկուեցաւ արկղակալութեան և հաշուելուութեան պաշտօն , փոխան դիմանապիտութեան պաշտօնիս , որ յանձնուեցաւ յաջորդիս : Այս պաշտօնի փոփոխութեան ես համակերպեցայ որովհետեւ պարաւորուած էի , զի 1920ի Մարտին կատարուած ընդհանուր ամսականներու յաւելումի ատեն եւս ես զուրածուած էի և եթէ չի համակերպէի ապահովագէս յաւէտ պիտի չի ատանացի 250 ե. Դ. ի վերջին յաւելումը , որ պայմանագրուեցաւ պաշտօնի այդ փոփոխութեան :

Այս կերպով ուրեմն 1919ի սկիզբը ունեցած 22 եգ . ունի ամսաթոշական նոյն տարւոյ Սեպտ .ին բարձրացաւ 25ի և 1920 Յունիսին , պաշտօնիս փոփոխութեամբ 27 , 50ի :

Նկատելի է սական որ այդ պաշտօնի փոփոխութեանը ազգանշանը եղաւ ինձի հանդէպ նիւթուած որոշ ծրագրի մը , որու համաձայն վեց ամէտ յետոյ ինձի վերագրուած ծանրակշիռ ամբատանութեան հե-

տեւունքով , որու արժէքն ու տարողութիւնը հակիրճաւ թէն բացատրեցի բարոյական մասին մէջ , ինձմէ առանցուաւ արկղակալութեան պաշտօնը և անոր փոխարքէն ինձի յանձնուեցան նուազագոյն կրկնապատիկ տշխատանք պահանջող կրկնի պաշտօններ , ինչպէս նուելինձի պարտադրուեցաւ 250 ե. Դ. ի գեղչ մը ամսաթուշակիս վրայ , գայն իջեցնելով 25 սոկիի :

Հարկ եղաւ որ անգամ մը եւս ևս ծայրահեղորդէն պրկեմ ուժերս կարենալ համար մէկը միւսէն առելի ծանր և պատասխանառու երբեակ պաշտօններու ինձի պարտադրած ճշշիչ աշխատութեանց և համրերութեամբ արանելու թէ ուր պիտի յանգէր վախճանը այս ըիրու և խիստ վերաբերութիւն :

Վեց ամիս յետոյ , որու ընթացքին չի դադրեցաց քնշհասարար բողոքելու և ինձի հանդէպ կիրարկուած անիրաւ և անարդար միջոցները մասնանշելու ուր ուրիմն կը առանամ գործադիր ժողովին 20 Յուլիս 1921 ամսարի պահօնագիր մը , որ ինձի կ'իմացնէ թէ նոյն ամիսն սկսեալ հաշուեխուզութեան պահօնիս յառուի ամսարուակիր պիտի վեարուի բաս առաջնոյն 750 ե. Դ. էն , Վերահաստաելով զեղչուած 250 ե. Դ. ը. :

Բայց որովհետեւ ուեւէ արշարացուցիչ փաստ գոյացիւն չունենալուն հետեւանքով երբեք չէի գանձած այդ պաշտօնին համար ինձի վճարել ուզուած 500 ե. Դ. ամիսով վեց ամիսներու ընթացքին , այդ պատճառաւ ոչ նոյն թուականնեն ցայսօր իմ այդ վեցամսնայ թուակա կը մնայ բարձրործականի մօտ :

Ես չի դադրեցաց Գործադիր ժողովին պարբերաբար ցիշեցնելէ թէ ինձի հանդէպ բոլորովին անարդար գըտնառուած էր , ինձի վերաբերելով ծանր յանցապարտութիւն և իր առենագրութեանց մէջ որձանադրելով զսնանք ,

թէ հարկ անհրաժեշտ էր դարձանել իր զործած ացք ծանր սխալը և ջնջել իր առմարներէն այդ առթիւ կատարուած ամէն արձանագրութիւն և հետք չի թողուր, Եւ եթէ ևս հարկադրուած էի կրկնապատկել իմ համբերատարութիւնն և աշխատաթիւններու և իմ վերաբերուածիս մէջ դնել ամէն խոհականութիւնն ասիս անոր համար էր որ կարենամ ժամանակի ընթացքին արթնցնել իրենց խիզճը և սրբագրել առաջ իրենց սնօրինակ սխալը, որ երբեք պատիւ չէր բերեր իրենց խկ, երկրորդ՝ որպէսզի ունե առիք չընծայիմ ընդհատել տալու պահօնս, նախ բան ասնամեայ ուշանի մը լրամք, որ ինձի համար մեծ կարեւորութիւն ուներ եւ զար պիտի բացառութեանոյ և երրորդ՝ որպէս զի ընդարձակ սահմանի մը մէջ վաստամբառութիւնն արձագանք գտնելը արդիւեմ պաշտօնս պահելով, որչափ կորիլի է:

Իմ վերջին յուշագիրս Բնդէ. Քարտուղարութեանն ներկայացոց ցի 5 հոկտ. 1922 ամսաթիւ երկառողով մը ուղղով կը յախառարէի թէ « ասիպուած պիտի ըլլամ խնդիրը ներկայացնել Կեդր, Վարչ, Ժողովի և ի հարէին Բնդհանուր Ժողովի, եթէ առաջին առթիւ ինձի չի հասուցուի այդ տիուր անցքերուն հետեւոնք զեղչուած 15 ոսկիին հետ միասին չի գանձած ամսաթուշաներս, գումար 45 ոսկի»:

Արդիւնքը կամ հետեւոնքը:

Յաջորդ օրուան 6 հոկտ. ամսաթիւը կրող պատասխան-գեկուցազիր մը, զոր 9 հոկտ.ի երեկոյին ժամը 9 ին միայն գրաւեզանիս վրայ զտայ և որ թէեւ ասորագրուած Գործադիր Ժողովի դիւանին (փոխ առենապետ Մ. Դաղարոսեանի և առենագափիր Վ. Մալէզեանի) կողմէ, բայց զորկ էր պաշտօնական կնիքէ և թը-

ամհամարէ ու միանգուածայն փոխանակ մեքենագրուած ըլլալու՝ Բնդէ. Քարտուղարի ձեռքով էր զրաւած, արագոնիկ ոչով մը կուգար ինձի ըսկու:

- 1.— Թէ Ժողովը հարկ չէ սնան անդրադանալ խմբոյն, զար բանից վերաբննած է արդին և որ իրձն համար Վ. Կ. Զ. Ն. Ա. Կ. Ն. Պ. Ա. Ս. Փ. Ա. Ո. Ա. Ը. է:
- 2.— Իրեն իմ կողմէ ներկայ սցուած այդ պատեհութիւնն օդուուելով յուղով հարկ կը տեսնէ նուեւ ոյժիցն իսկ ինձի հազորդելու թէ՝ տորմութիւնն սկսեալ պաշտօնս պիտի ջնջուի, որով ինձի ժամանակ կը արուի յարմար գործ մը պատրաստելու :
- 3.— Եւ կը վերջացնէ արագէ՞ « Սւելցնենք նուեւ թէ, նկատի առնելով ձեր երկարամեայ ծառացութիւնները, ժողովս ձեղի պիտի ընէ արդար հասուցում մը »:

Այս վութեան և կարուկ պատասխանը չափազանց խոսուն է կարենալ հետեւցնելու համար որ նախ քոն Կեդր, Վարչ, Ժողովի դիմուլ, զիս պաշտօնէ զրկուած, դիրքէ ինկած և իրաւունքս պաշտապանելու անզօր վիճակի մը հնդարել ուզուած է:

Թէ՛ այս պատասխան-զեկուցազրի և թէ անոր առիթ ընծայող իմ զրիս պատհէնները զրկեցի Բարիզ և փոխանորդիս միջոցաւ դիմում կատարել առուի Կեդր, Վարչ, Ժողովի անդամներէն ունաց մօտ, պահանջելով վերաքննութիւն խնդրոյ, անկողմնակալ, անաշառ և խոհամիտ մարդոց միջոցաւ և արդարագրութիւն են . :

Աւազ՝ այս զիմուեմն իմ կրած տպաւորութիւնս ոյն եղաւ որ անոնք նախապէս տեղեկութիւն սուցած էին և պէտք եղածէն աւելի ներշնչուած էին ու նախա-

պատրաստուած իմ խնդրոյս մասին, ամհատապէս թէ պաշտօնապէս, այստեղի Գործ . Ժողովին, որուն գործերուն և կարգադրութեանց միջամտելէ հեռու մնալ կ'ուզէին:

Այս տպաւորութիւնս անո՞ր համար մանաւանդ իրողութեան համապատասխան կը նկատէի, որովհետեւ կեդր. Վարչ. Ժողովի Եւրոպա գանուող անդամներուն իմ դրկած 7 Յունիլար 1919 ամսաթիւ պատճէնիս վսկմ. Ստենապետին կողմէ ընծայուած կարեւորութիւնը սըրանեղութիւն պատճառաւած էր այստեղի անդամներուն, որոնք այդ թուակունէն ասդին զանազան առիթներով և հետազնետէ աւելի շնչառուած կերպով ի յայտ բերած էին իրենց տհաճութիւնն : Եւ որովհետեւ յաջորդաբար անդամներէն ոմանք այցելած էին Բարիկ, ոչ մէկ տարակոյս, որ արգելելու համար ապագայի ուելէ միջամտութիւն, իրենց ուղած կերպով ներկայացուցած էին խընդիրը և նախապաշարած անոնց միաքերը :

Միւս կողմէ Գործադիր Ժողովը, որուն 6 Հոկ. 1922 ամսաթիւ պատասխան-գեկուցագրին ոչ մէկ պատասխան տուած էի, անոր կէս պաշտօնական հանդամնքին համար, զոր վերը բացատրեցի, ինձի կ'ուզզէր 5 Յունիլար 1923 ամսաթիւ և 20487 թուահամար պաշտօնագրի մը, ստորագրուած փոխառենապետ Մ. Ղազարոսեանէ և փոխ-գանձապետ Տօքթ. Քէջէնեանէ, որ այս անգամ՝ կը կրէր նաեւ պաշտօնական կնիք և որ ինձի կը յայսնէր թէ իրեւ վաղեմի պատօնեալ 100 նիդիան, ուկի բացատրիկ (\*) հատուցում մը պիտի ըլլաց ինձի և փոխանակ 31 Գեկանմբերին՝ 31 Յունիլարին է որ վերջ պիտի գանէ պաշտօնս, զի ընդհ. Քարտուղարին հիւանդութեան պատճառաւ կարելի չէ եղած յամանակին ինձի հաղորդել սոյն որոշումը են :

(\*) Հապս այս 3-4 ամսաբուժերու հատուցումները, որբանց ներու տիրելներուն, ոչ թէ վաղեմի, այլ յոյժ կարենաւ պատօնագրութեան վերը:

Պատասխանելով 6 Հոկտ. և 5 Յունիլար ամսաթիւ Գործադիրի վերցիշեալ պաշտօնագիրներուն 31 Յունիլար 1923 ամսաթիւ նամակով մը, դիսել տուի թէ

« 1. — Ես իրաւունք շահած էի ամբողջ տարեթոշակի մը, համաձայն 1914 ի ներքին կանոնադրի տրամադրութեան :

2. — Նաեւ տասնամերայ գիգուած արձակուրդներուն փոխարքէնին, որ կը ներկայացնէր նոյն քան գումար մը: Զի բերանացի և գրաւոր որձակուրդի արտօնութիւն ինդրուլ իմ դիմումներուն գոհացում չէր տրուած քամանակին, մինչ ուրիշ պաշտօնաներու կամ արձակուրդ տրուած էր և կամ յաւելուածական ամսաթոշակով փոխարինուած: Ուստի հարկ էր այս հիմունքներուն վրայ կայացուցած իրենց արդար որոշումը հաղորդել ինձ »:

Գործադիր Ժողովը պաշտօն կը յանձնէ Ընդհ. Քարտուղարին պատասխանել իմ վերի նամակիս և կրկնել իր նախորդ որոշումը, ինչպէս կը յայսնէ Տ. Ա. Մալեկ-եան ինձի ուղղած 1 Փետր. 1923 ամսաթիւ նամակին մէջ, որ կարեւոր վաւերացիր մըն է ինձի համար, զի կը հաստատէ, զնէ չի ժխտեր, որ 1914 ի ներքին կանոնադիրը, զոր ինքն իսկ պատրաստած է և որ մինչեւ 1920 ծառայելէ յետոյ միայն փոխանակուած է ուրիշի մը հետ, կը տրամադրէր տարեթոշակ մը յաւելուածական վարձքաւ այն պաշտօնային որ տասը անընդհատ տարիներ պաշտօնավարած էր Բարեգործականի Պաշտօնատեղին մէջ, և տարեկան 15 օր արձակուրդ :

Բարեգործականի Ընդհ. Քարտուղար և Կեդր. Վարչ. Ժողովի, ինչպէս նաեւ յետոյ Գործադիր Ժողովի ասու-

նաղպիր մէթր վ. Մալէզ'անի իր յիշեալ նուժակին մէջ  
կը գրէ ի մէջ այլոց՝

« Ֆիտել կուտամ որ 1914ի կանոնադիրը *projet*  
մըն եր որ չի վաւերացուեցաւ և չի գործա-  
դրուեցաւ։ Ամէն պարագայի մէջ արձակուր-  
դը համբասան միջոց մըն է և ոչ թէ հա-  
սոյթի ալբիւր՝ պաշտօնեացին համար, 1-2 բացա-  
ռութիւնները օքէնք վնակացմիր, և արդէն արձ-  
ւան նուշեներն ալ զնանառան հասուցումներ  
էին են, են»։

Մէթր Մալէզ'անի յիշեալ նուժակիր, որուն կարե-  
տրութիւնը շեշտեցի, յաւէտ իմ իրաւունքու կը հաս-  
տառէ, քանի կը ժխտէ որպինակու։

- 1.— Այդ Կանոնադիրը պատրաստուեցաւ, և 6  
անհնդհնոս ասարիներ գործադրութեան դրու-  
ցաւ, իմ կրկին պահանջումներն յատոյ, որոնք  
տեղի ունեցան իմ պաշտօնի ձևանարկելէս 3 և  
6 ամիս վերջ։ Առաջին դրութիւն, 7 Յուն-  
վար 1913 ամսաթիւ, ուղղուած առնադպիր  
3. վ. Մալէզ'անի և գանձապետ Տ. Մ. Անդ-  
րանիկիանի, կը պարունակէ ի մէջ այլոց նույ-  
նեաւելալը։ « Հարկ անհրաժեշտ է պատ-  
րասաւմը ներքին Կանոնադրի մը, ուր նո-  
խառնուած ըլլան և որոշապէս առանուին իւ-  
րաքանչիւր պաշտօնեայի պատասխանառուու-  
թիւնները »։ Իսկ երկրորդ դրութիւն, 24  
Ապրիլ 1913 ամսաթիւ, « Վեցամսաւայ Տեղեկո-  
գիր մը », ուղղուած կեղր. Վարչ. Ժողովի, կը  
պարունակէ ի մէջ այլոց նույն հետեւեալ հատ-  
ուածները։ « Ուստի կը ինդքիմ որ կեղր.

Վարչ չ. Ժողովը որոշակէս յայտնէ ինձ թէ՝ զո՞հ  
է պաշտօնավարութենէս։ Եթէ զո՞հ է ովհափ  
մամ քանի մը անհրաժեշտ պայմաններով,  
իսկ երբեւէ եթէ զո՞հ չըլլայ՝ կը խնդքիմ որ  
հաղորդէ ինձ զո՞հ երեք ամիս առաջ։

« Այդ քանի մը անհրաժեշտ պայմաններն են՝  
1.— Գոնէ միամսնայ արձակուրդ ամառուան  
մէջ »։ . . .

2.— « Որպէս զի պաշտօնեաները իրենց թերու-  
թեանց մէջ քաջելերութիւն չի գտնեն և որոշ  
գիտակցութիւնով վերաբերութիւն դէպի իրենց  
պաշտօնը՝ անգամ մը ևս կը կրկնեմ թէ կա-  
րեւոր է ներքին Կանոնադրի մը պատրաստու-  
թիւնը »։

Արդ 1.— Կարելի՞ է զրկել մէկը բացորոշ և  
հեղինակին հասուառումն խկ վաւերական  
մէկ արամադրութենէն ներքին Կանոնադրի մը,  
որ մարմին առած և վեց տարի կիրարկուած  
է իրեն խկ կրկնակի պահանջումներուն հետե-  
ւանքով։

2.— Եթէ *projet* մըն էր որ չի վաւերացուե-  
ցաւ և չի գործադրուեցաւ, ինչ եր ուշենն  
կիրարկուած դրաբինը վեց տարուան բիրաց-  
ֆին, կարեւոր Պատօնատան մը մէջ, որպիսին  
և Բարեգործականինը։

3.— Զի վաւերացուելու և չի գործադրուելու  
համար ուրեմն պատրաստուեցաւ հեղինակին խկ  
բերանով կանոնադրի կոչուած *projet*։ *Pro-  
jet* ի մը օրինական առաջնորդութիւնը միթէ առ-  
ուառելն առարիէ մը առելի կրնայ երկարա-  
ձրգուիլ։

4.— Տարակոյս չիկայ թէ « արձակուրդը հանգըշտեան միջոց մըն է և ոչ թէ հասոյթի աղբիւր , պաշտօնեային համար » : Բայց երբ այդ պաշտօնեան առաջին օրէն իսկ պայման դրած է և պարբերաբար պահանջած է զայն վայելելու արաւութիւն և իրեն չէ արամագրուած , միթէ զրկանքի և անիբասութիւն ենթարկըւած չըլլար , երբ ուել կերպով չի փոխարինուիր:

5.— Կը հաստատէ թէ սպաշտօնեաներէ ոմանց փոխոն արձակուրդի՝ յաւելուածական ամսաթոշակ վճարուած է և սակայն բացառութիւն կը նկատէ և « օրէնք չեն կազմեր » կ'ըսէ : Ինչո՞ւ համար են ուրեմն թէ՝ 1914ի Կանոնադրին բացորոշ արամագրութիւնը , ինչ պէս նաև անոր յաջորդող « Համանգ պատօնեարեան » անունին ամի 1920ին պատրասրւածին տրամադրութիւնը այդ մասին , ուր կ'ըսէ թէ՝ ոռոշեալ պահետեն դուրս տրաւած յամելուածական աշխատութիւնները կրկին վարձենք կը փոխարինուին » : Արդ , արձակուրդը երբ կը մերժուի սպաշտօնեային յաւելուածական աշխատանք է որ արուած կ'ըլլայ ինչո՞վ կը փոխարինուի ուրեմն և ինչպէս բացառութիւն կարելի է նկատել այդ տուիթով գործադրուածները : Հակասութիւնը բացայսոյն չէ միթէ :

6.— « Եւ արգէն արուած նուելքներն ալ գնահատման հաստացութիւններէնն » կ'ըսէ : Դիտելի է որ գնահատութիւնները կ'ըլլամն ամսականի յաւելուածներով և առարեգլուինի նուելքներով , և ոչ թէ

արձակուրդի փոխարէն եղած վճարումներով : Ինձի ոչ թէ միայն ուել առիթով բացառիկ նուիրաստութիւն չէ կատարուած , այլ ընդհակառակը նմանօրինակ պարագաներու և ամսականի յաւելութիւններու առեն մէկէ առելի անգամներ պատահած է որ անառասութիւն և զրբկուիր , իբր թէ այդ հաստատութիւնն եթէ ոչ ամենաօրակարը , գոնէ այդ կարգի պաշտօնեաներէն մէկը եղած չըլլայի 11 անընդհատ տարիներ :

Ահա թէ ո՞րպիսի հմտունքներու վրայ ես կը նկատէի « կարեւոր վաւերագիր » մը մէթր վ . Մալէզեանի ինձի աղջած 1 Փետր . 1923 ամսաթիւ հասմակը և կ'ըսէի յաւելու իր իրաւունքն կը հաստատէ , քանի կը ժխտէ : Գործադիր ժողովի մօտ ունեցած կրկին պաշտօնենքն « Կրթտական և Որբախնամ Յանձնաժողովի քարտագրութիւնն » յատուկ ամսաթոշականն էր 12 եդ . ոսկի , և « Կեդրանի հաշուելիութեան » յատուկ ամսաթոշակը՝ 7.50 եդ . ոսկի , գումար 19.50 եդ . ոսկի :

Ինձմէ այդ պաշտօնենքն ես առանցան 31 Յունիար 1923ին : Գոլով 3-րդ պաշտօնիս , « քարտագրութիւն Գանձիրէի Մանաժողովի » : Որու ամսաթոշակն էր 8 եդ . ոսկի , ինձմէ չսոնուեցաւ նոյն պահուն՝ հետեւայ պարագաներու մէջ :

Գործադիր ժողովը պաշտօնագիր մը ուզգեց Գանձիրէի Մանաժողովին , անոր իմացնելով որ Կեդրանին մօտ ունեցած պաշտօնելու ջնջուած են , օգնականս Կեդրոն առնուած է , իսկ Մանաժողովին կը թողուք ինձի հետ կորդապըրէ քարտագրութիւնն պաշտօնա :

Մանաժողովի առենապես ողբույժեալ Յ. Թէմհամեան ժողովին մէջ յայտնեց թէ Գործադիր ժողովը ինքզինք

իրաւուու չի նկատե՞ր միջամտել Մանաժողովի գործերուն և Մանաժողովը ազատ կը թողու իր կարգով բութեանցն ու որոշումներուն մէջ :

Այդ ժողովին մէջ ես արտապայտուեցայ այսպէս. — « Գործադիր ժողովի իմ մասիս տուած որաշումը տալու կոյս չիկայ թէ զիս կը հարկադրէ հետամուտ ըլլալու ուր պաշտօնի և ցորքան այս քաջաքէն հետացումն անհրաժեշտ չէ՝ պիտի ուղեմ շարունակել Մանաժողովիդ քարտուղարութեան պաշտօնը, անո՞ր համար որ երկու տարրուան գործակցութեանս ընթացքին համակրանք միայն վայերած եմ, եթէ ակայն, Մանաժողովդ ուղել վերահստանել անշուշտ պաշտօնս » :

Առանձին խորհրդակցութենէ մը վերջ Մանաժողովը իր առենապետին միջոցու ինձի հալորդաց թէ զիս վերահստանուած է պաշտօնիս մէջ և ինձի կը յանձնէ նաև օգնականիս աշխատութիւնները՝ անոր յառուկ ամսաթոշակին հետ միասին :

Այս վերջին պաշտօնը ստունձնեցի տուամնայ հաճախամանքով միայն, պարտապէս ժողովին գործերը գիւրացը նելու մասծումով, զի ինչպէս ժողովին մէջ եւս բացարկցի, անիկա առանձին պաշտօն մըն էր, նուազգոյն 8 ոսկի արեղողութեամք : Օգնական կը թ. Որբ Յանձնաժողովի յառուկ աշխատութեանցը համար, որ համեմատաբար չափազանց թեթև էին, կը ստունար 7 ոսկի, իսկ Մանաժողովի աշխատութեանցը համար, որ գրեթէ ամբողջ ժամանակը կը գրաւէին, կը ստունար 2 ոսկի միայն, այսպէս որ եթէ Մանաժողովի քարտուղարութեան պաշտօնիս ամսաթոշակը 8 էն 10 ոսկիի կը բարձրանար, միւս կողմէ աշխատութիւններս կը կրկնապատկուին ու արդապէս, և թէեւ Մանաժողովի առենապետը ըստու որ եթէ այդ մասին ըսելիք մը ու-

նէի՝ ժողովը պիտի ուղէր լուէ յառաջիկացին, բայց ես չուզեցի զբաղութիւ այդ հարցով, զի ինձի համար կարեւորը ինդրոյս հետապնդութիւնն էր, որ իմ հոն ներկայութիւնով գիւրութեամք կրնար գլուխ հանութիւ և ոչ երբեք հեռուելին :

Այսու ամենայինիւ ի պատիւ իրեն ըսկմ որ Մանաժողովը ինքնարերարար 12.50 ոսկիի բարձրացոց ամսթոշակս Մայիսին : Տարբեր ինդիք որ ես իրաւունք չահած էի առնուազն կրկինին, վանազի օշնականին Կեդրոն անզափոխուելովը կրկինաբառկուած աշխատութիւններու անգամ մը ես կրկնապատկուած էին, որովհանեւ հաւաքիչին հրաժարելովը և զործիչ մը պաշտօնի կոչուելովը հարկ եղած էր ունենալ երկու հաւաքիչ, որմնց, ինչպէս նաև զործիչին հետ ամբողքայ հաշումնասութիւնն պէտք էր կասարել և 500 էն շուրջ 1000 ի բարձրացած զործօն և նորագիր անզափներու մուտքի, ամսովճարի ասացագիրները կորելէ վերջ, իւրաքանչիւրին յասուկ 8-10 արձանագրութիւն կասարել և հակակշռի ամել պահել՝ բոլորային առանձին, որով, ոչ թէ միայն պայմանագրեալ 7-8 ժամերը, այլ յաճախ օրուկան 10 ժամերեկի ժամանակը կը գրաւէր այդ պաշտօնը : Եւ որովհանեւ համրութու զործ մըն էր և միւս կողմէ ինդրոյս հետապնդութիւնը կար, ոչ իսկ բերան կը բանացի այդ մասին բան մը ըսելու համար, այլ ընդհակառակը լուիկ զործը առաջ վարել կը ջանացի :

Այսպիսի պայմաններու մէջ է որ բոլորովին առանձին ես վարեցի Գահիրէի Մանաժողովի քարտուղարութեան պաշտօնը, զո՞ր եւս ասկայն Գործադիր ժողովը ինձմէ առնել տուաւ 7-8 ամիս յետոյ, այդ կերպով բոլորային ապացուցանելով թէ ի՞նչ եղած է ինձի հանդէպ իր մասցած եւ հետապնդած նպատակը, միջամբ-

աելով Մասնաժողովի գործերուն և կարգադրութիւններուն, որուն ինքզինք իրաւասու չէր նկատեր սահման 7-8 ամիս առաջ և Մասնաժողովը ազատ կը թողուր :

Ո՞չ միսյն այդչափ : Կ'արգիլէր Մասնաժողովը ինձի տալէ պարսպերծութեան և բարենք պատօնավարութեան վկայական, ինչպէս նաև տարապարտ հրաժարեցուցման յատուկ հումանեց հումանեցում, յայտարարելով թէ՛ Բարեկարձականը մէկ է և ինք արդէն իսկ տուած է թէ՛ մին և թէ միւսը, հոկտոակ ճշմարտութեան, ըստ որում ոչ վկայական տուած է և ոչ լման հումանեցում :

Միւնոյն մտայնութիւնավ չե վն արուած Սեպտ, ամսարուակու, որու ամբողջ տեսողութեան օրական 8-10 ժամ՝ աշխատութիւն ունեցած և Մասնաժողովի գըրասենեակին մէջ՝ հաշիւները դլուխ կատելու, հաշուեցոյցները, հաշուեկշիռ և տեղեկադիր պատրաստելու համար :

Իրողութիւնները ո՛յնքան խօսուն են որ հարկ չեմ տեսներ աւելի ծանրանու ամսոյ վրայ և կը փութամ պարզելու իմ վերաբերում այդ բոլոր երեւացթիւններուն հանդէպ :

Գործադիր Ժողովը յամսուօքէն հետամուցաւ իր անիբաւ և անարդար որոշումները ինձի ընդունելուալու, Բացի պաշտօնադրկութիւններէս, որոնց ամսարդար ըլլալուն միշտ բոլորքու մնացի, ինձիներկայացուց 8 Յնվր., 31 Յնվր. և 28 Փետր. 1923 թուականներուն երեք անգամ, առորոգբելու համար հաշուեփակի ստացագիրներ, թէ՛ 1921 առաջին վեցամսուց հաշուեխուզութիւնն փոխարէն 30 սոկիի և թէ՛ իրբեւ «արդար հումանեցում» 100 սոկիի փոխարէն, զորս պատրաստ էր վճարելու :

Երեք անգամուն ալ մերժեցի սառորոգբել: Երբորդ անգամուն, 28 Փետր. 1923, Գործադիր Ժողովի Դիւանը, մասնաւորապէս Մ. Ղազարոսեան և Տօքթ.Պ.Սերովբեան, կշտամբանքներ ուղղեցին ինձի, բայց ես խոհեմութիւն համարեցի իրենց գործածած լեզուով չի պատասխանել: Մէթր Վահան Մալէզեան առաջարկեց գասուարան դիմել: Պատասխանեցի թէ՝ պէտք էր նախ Կեղը. Վարչ. Ժողովին դիմէի, եթէ կարտօնէր Գործադիր Ժողովը, որ ի վերջոյ հաւատութիւն յայտնեց (որովհետեւ իր կողմը շահած էր զայն, ինչպէս յայտնի եղաւ):

Մէթր Վ. Մալէզեան, որ հաբարական տուած էր Ապրիլին մեկնելու և Եւրոպա հաստատուելու համար, և ընդունուած էր իր հրաժարականը թէ՛ տառենադըպութիւնէ և թէ Ընդհ. Քարտուղարութիւնէ, մէկէ տեւի անգամներ փափաք յայտնեց որ մեկնելէ առաջ կարգադրէ ինողիս: Կ'ուզէր կարգադրել հետեւեալ կերպով.—

1.— 1921 առաջին վեցամսեայ թոշակս ամբողջութիւն վճարել տալ, այսինքն զեղչուածը՝ 15 ոսկի և չի զանձածն՝ 30 ոսկի, գումար 45 ետ. ոսկի:

2.— Իր խմբադրութեամբն իսկ պատրաստել փայլուն վկայագիր մը, բարսոք պաշտօնավարութեամս համար, որ պիտի կրնար ծառայի որպէս հակառակեցութիւն կամ եերքում ինձի վերագրուածներուն դէմ:

Կարպէլը էր միթէ համարկերպիլ, երբ անհամեմտառելի և անժխտելի իրաւունքներ ունէի իրականացուցած և երբ Գործադիր Ժողովի առենագրութիւնց տըցած առաջարկել առաջարկելու միայն պիտի հոչակէին թէ ևս անպարկելու պաշտօնեայ մը եղած եմ: Մէթր աշդ-

քան ծանրակշխու իրողութիւնը կրնայի՞ն կարգադրութէ առաջարկուած ճզճիմ միջոցներով : Բացաբայտ է թէ ինձի համար անկարելիութիւն էր ընդունիլ, որքան աւ փափաքէի իրաւախոհութեան :

Գործադիր ժողովը Յ Մայիս 1923 ամսաթիւ պաշտօնագրով մը ինձի հազորդեց թէ իրեւ անսովոս աւանդ արձանագրած է իմ անունով այն 100 ոսկին, զոր ինք որոշած է իմ պաշտօնի դադարման առթիւ իրեւ հատուցում, հաշուական կանոնաւորութեան համար, և թէ այդ գումարը ինձի պիտի վճարուէր ուզած առենս :

Իրեւ հաշուական երբեք չէի կրնար զանձեւ այդ գումարը, ուստի հետեւալ սասացագիրը ասուսպրեցի և ծառայ Ալիի հետ զրկեցի որ վճարեն .—

«Սասացած եմ Հ. Բ. Բ. Միութեան Գործադիր ժողովին (100) հարիւր Եդ. ոսկի, իր որոշումով պաշտօնիս դադարման առթիւ իրեւ հատուցում իմ անունով անսովոս աւանդ արձանագրած գումարը, համաձայն Յ Մայիս 1923 ամսաթիւ և թիւ 21171 ինձ ուղղած պաշտօնագրին, սպասելով համերձ Կեդր. Վարչ. Ժողովի վերջնական կանգնադրութեան, որուն մօս դիմում կատարած եմ այս մասին Գործադիր ժողովի արտօնութեամբ: Գանիրէ, 5. 5. 923 .

Սեւյոնին Թ. »

Վերջին անգամ մը ևս պահանջեցին որ իրենց պատրաստած հաշուականի սասացագիրը ասուսպրեմ : Երբ տեսան որ անդրդուելի կը մնամ, իմ պատրաստած վերի սասացագիրիս վերջին մասը չնչել առաջարկեցին, զոր ևս մերժեցի, և իրենք երբեք որ յետոյ յօշարեցան նոյնութեամբ ընդունիլ վերի սասացագիրս և

ինձի չ'քով մը վճարել նշանակեալ գումարը :

Գործադիր ժողովի 28 Փետր. 1923 ին յայնած համանութենէն յետոյ, ևս գիմեցի Բարեգործականի վերին իշխանութեամ, Բարիղի Կեդր. Վարչ. Ժողովին, 7 Մարտ 1923, 7 Նոյեմբեր 1923 և 7 Փետր. 1924 ամսաթիւ իմ բոլոքագիրներավ, որոնց մէջ ամփոփ կերպով պարզեցի ինձի պարտադրել ուզումած բարոյական և նիւթական զրկմանքները և պահանջեցի անկողմանկալ, անտաշան և խղճաշիտ քննութիւն մը կատարել, ճշմարտութիւնը երեւան ընթել և արդարութիւն ընել :

Անջամարտը բարոյական մասէն, որուն հետեւամաքով ինձի պատճառուած վաստանմբաւութեան համար միշտ պահանջեցի բաւարար և կատարեալ գոհացում, ևս պահանջեցի Կեդր. Վարչ. Ժողովին կարգողրութիւնը հանեւ իմ նիւթական իրաւունքի, զոր ներկայացուցի հետեւեալ կերպով.—

1.—Մէկ տարեկիցար, իրեւ յաւելուուծական վարձք աւելի քան տասը ասրի մելնդնաս պաշտօնագրութեամ փոխարէն, որ կը սկսի 28 Հոկտ. 1912 և կը վերջանայ 31 Օունվար 1923, արտադրութեամը համաձայն պաշտօնէութեամ յատական կարքին Կանոնագրի, որ 6 տարի (1914-1920) ծառայեց անփոփոխ, գումարը . . . . . Ե.Ռ. 330 .-

2.—Տաճնամենայ արձակուրդներուն փոխարէնը, հաշուակած ամսաթուշակներուն միջինով, տասը ամսաթուշակներուն միջինով . . . . . Ե.Ռ. 200 .- վերածեալ վերածեալ Ե.Ռ. 530 .-

Վերածեալ Ե.Ռ. 530 .-

Մանօք. — Թէ՛ նախկին կանոնագիրը  
և թէ անոր յաջորդող «Հրահանգ»-  
ները կրկին վարձք սահմանած են  
յաւելուածական աշխատութեանց,  
ինչպէս են իմ արձակուրդներս,  
որ չի տրամադրուեցո՞ն՝ հակառակ  
իմ քանի՛ քանի պահանջումներուս,  
եթէ մինչեւ խկ տարեկան 15 օրի  
գեղջուին անոնք :

3.— Հաշուեխուզութեան յատուկ  
վեցամսեայ թոշակս (1 Յունվար-  
30 Յունիս 1921) . . . . Ե.Ռ. 45 .-

4.— Գահիրէի Մասնաժողովին ունե-  
ցած պահանջներս. —

Սեպտ. ամսաթոշակս՝ Եդ. ոսկի 12.50

Եռամսեայ մը իրրեւ հատուցում  
քարտուղարութեան պաշտօնէս հրա-  
ժարեցուցման՝ Եդ. ոսկի 37.50 50.-

Համագումար Եդ. ոսկի 625.-  
գեղջուած՝ 8 Մայիսին վճարուածը  
իրրեւ թերհաշիւ Եդ. ոսկի 100 .-

Մասցրդ պահանջս Եդ. ոսկի 525 .-  
հաշուելով առ հարիւր 9 տոկոս մինչեւ կար-  
գարբութեան օրը:

\*

Ես պարտականութիւն նկատուցի նաեւ 10 Յունվար  
1924 ամսաթիւ նամակով մը դիմել Գործադիր Ժողովի  
և պահանջել լուսաբանութիւն քանի մը ինդրոց  
մասին, զորս նոյնութեամբ հոս կը գնեմ իրենց շահե-  
կան հանդամանքներուհ համար. —

«1.— Հ. Բ. Բ. Միութեան Գահիրէի Մասնաժողով»

վը իր մօտ ունեցած քարտուղարութեան պաշտօնէս  
հրաժարեցուց զիս, Պատ. Ժողովէդ ստացած պաշտօնա-  
գրի մը արամագրութեան համաձայն, որ Կեդր. Վարչ.  
Ժողովի հաւանութիւնը եւս կը կրէ եղեր: Արդ, կը  
խադրեմ որ ինձի հաճիք հաղորդել թէ ինչ է պատ-  
ճառը այս վերջին հրաժարեցումիս, որ, ինչպէս նո-  
խորդ հրաժարեցումներս, ուրէ արդարացուցիչ հիմ չունի:

2.— Մասնաժողովը կը մերժէ նաև եռամսեայ  
հատուցումի, պարագաներութեան և բարուք պաշտօ-  
նավարութեան վկայականի իրաւունքս, յոյանելով թէ՝  
Գործադիր Ժողովի հաւանած չէ արդէն խկ հարի  
եղած վկայականը տուած և հատուցում ըբած ըւ-  
լալով ինձի, ինչպէս կը մերժէ նաեւ հաշուեփակի,  
հաշուեկշիռի և մեղեկագրի պատրաստութեան համար  
արամագրած աշխատութեան վարձքը, միակ ամսաթոշակ  
մը, Սեպտ., որու ամբողջ տեւողութեան հանապաղօր-  
եայ 8-10 ժամ անընդհատ աշխատութիւն ունեցայ Պաշ-  
տօնատեղին մէջ:

Եթէ այս յայբարարութեանց մէջ ուրէ թիւրի-  
մացութիւն չիկայ, անոնք աւելի քան զարմանալի են,  
ուստի և հարկ է որ Գործադիր Ժողովի հաճի ձգել  
զանոնք. զի նաիս ինձի վկայական չէ տուած, երկրորդ  
100 ոսկիի վճարումը թերհաշիւ մը միայնէ իմ արդար  
և բահաւոր պահանջներու գումարին վրայ, զոր 475  
Եդ. ոսկիի կը զեղչէ: Անոնց մանրամանութիւնները  
ներկայացուցած եմ Կեդր. Վարչ. Ժողովի, որ անշուշտ  
ձեզի կը հաղորդէ: Խակ Սեպտ. ամսաթոշակին մերժումը  
բացայսրտ և անորակիլի անիբաւութիւն մըն է:

3.— Կայ առելի կարեւորը, եթէ ստոյդ է որ  
Պատ. Ժողովի այսօր կը մկանէ Բարեգործականի տեղ-  
ույթ կեղընն ու Մասնաժողովը միակ և անբաժան հաս-  
ույթ կեղընն ու.

տառութիւն մը , ուստի և այդ ըմբռառութով կը մերսէ եռամսնայ հասուցութիւն պահանջու , 37. 50 Ե. Ա. , հակառակ այն իրողութեան թէ Յունվարի վերջը վերջացած նկատելով Կեդրոնիդ մէջ ունեցած կրկին պաշտօններա բոլորովին Մանաժողովին կը թողուր ինձի հետ համաձայնելու պարագան՝ քարտուղարութեան պաշտօնիւ համար , այն առեն պէտք է ըսդունի միւնուն առեն որ Փետրվարէն Սեպտ . վերջ ամսութոշակներս հաշուելի պիտի ըլլուն ըստ առաջնոյն 27. 50 Եդ . սոկիչն , որոց դումարը կ'ընէ 220 Եդ . սոկի , ուրիշ զեղչելով այդ Մջամսի գանձածներս , 80 Ե. Ա. , մասցորդ պահանջու կ'ըլլոյ 140 Եդ . սոկի , քանի որ այդ ութ ամսուան միջոցին , օդնականս Կեդրոն անդախիսուած , աշխատութիւնն առելի քան Կրկնապատկաւած և ևս բոլորովին առանձին մնացած ըլլուով , օրական 8-10 ժամ՝ աշխատութիւն արագադրեցի , առանց ոհեւէ յաղաղումի գործերը կանոնաւորութեամբ և արդիւնաւորապես յառաջ առնելու համար , ինչպէս կը հաստատեն աշճանաշրութիւնները և գործն անդամներու թիւին 500 Էն 1000 ի բարձրացուած :

Արդ , Փետրվարէն Սեպտ . վերջ ունեցած պաշտառալորութիւնն Կեդրոնէն անջատ և ուղղակի Մանուժովովին հետ եղած համաձայնութիւն մը նկատելով , իրր հաշուեփակ յիշեալին մօտ ունեցած պաշտօնիւ , ևս պահանջու էի ըստ սովորութեան եռամսնայ մը՝ իրրև հասուցում , որ Սեպտ . ամսութոշակիս հետ կ'ընէ 50 Եդ . սոկի միայն , զոր ձեր մարեւմը կը բարձրացնէ վերի համաձայն 140 Եդ . սոկիի : Զեղի կը մնայ ուրիշ անդրադառնուլ այս խնդրոյն , ձշղել յայտնի հակառաթեանը և ինձի հաղորդել թէ Կրկուքէն ո՞րը կ'ընդունիք , Բարեգործականի անդրոյս Կեդրոնը և Մասնակից միամբ միամբ և անքաժան հաստատելու մասին :

Թէ Մանաժողովը իրաւասաւ իր համաձայնութեամեց մէջ . քանի որ այս վերջինը տունց ձեր արգելքին ինքինք պարագանը կը նկատէր գոհացում սարու իմ տիշեալ չափաւոր և տրամադրանական պահանջիս » :

Իր նո՛նքան շահեկան հանգամանքին համար հարեց կը զգամ հոս արաւազը 15 Յունվար սմսաթիւ պատասխանը նուև Գործադիր Ֆողովին .

« Ստացանք ձեր 10 Յունվար սմսաթիւ նամակը :

Ձեր շօշափած ինպիրեներու մասին մնը ամբողջ բառելիքները արգէն իսկ ըստ ձեզի սոկի առաջ եւ ոչինչ ունինք աւելցնելիք անոնց վրայ : Կը ինդրենք հետեւբար որ ժողովս ժամավաճառ չընէք նոր դիմումներով » :

Պարզ է թէ այս պաշտօնադիրը ուղղակի համաձայնութեան մը ամէն հաւանականութիւն կը բառնոր և զիս կը պարտաւորէր սոի առնել երկրին զատարաններուն գուռը , ինչ որ սոկայն ինձի համար այդ պահուն անկարելիութիւն մըն էր՝ հարկեցուցիչ ծախքերը արամագրելու վիճակին մէջ չի զանուելու և այլ պատճառներով :

Աւագի ապահավագրեալ զրկեցի հետեւեալ նամակը 4 Փետր . 1924 ամսաթիւ , թ . 143 , ուղղուած Գործադիր Ֆողովի ժողովի առնապետին :

« Ստացայ ձեր 15 Յունվար սմսաթիւ պաշտօնադիրը , որ իմ 10 Յունվար սմսաթիւ նամակիս շօշափան ինպիրենէն ոչ մէկին պատասխան կը պարունակէ , ընդհակառակը այլեւս ձեզի սովորական դարձածուով մը կը ինպրէ « ժողովդ ժամավաճառ չընել նոր դիմումներով » :

« Ծառ լու : Թէեւ այժմ անկարող , բայց երբ հնարքաւոր լինի ինձ , ձեր ինձի պարտադրան հարկադրու-

թիսն աակ, պիտի ձեռնարկեմ օրինակուն ամէն միջոցներով պաշտպանել իրաւունքս։ Իմ այդ ձեռնարկի առաջ բերելիք հետեւանքներուն բավանդակ պատասխանատութիւնը պիտի պատկանի Պատկ. Ժողովիդ քանի որ ևս այդ նախատեսութիւններով էր որ միշտ ցանկացի իրաւախոնութիւններով կարգադրուած տեսնել այս խնդիրը, զոր աակայն դուք մերժելով մերժեցիք»։ Խնդրոյն ստացած այս վերջին հանդաւմնաքը ո՛չ միտյն կեղր. Վարչ. Ժողովի ուղղած Դ Փետր. 1924 ամսութիւ վերջին բոլոքագրիս մէջ ամիոփի կերպով պարզեցի, այլ նու որոշակէս զբեցի թէ՝ ի՞նք եւս պատասխանատու էր բովմնեակ հետեւանքներուն համար, զի ևս ի՞ր հրաւերով պաշտօնի կոչուած էի Պոլիսէն, ի՞ր որոշումով պաշտօնավարութիւն ունեցած էի և 1920 ի վերջ տեղի ունեցած իմ անուսնարկութիւնս ի՞ր իսկ Վարչութեան օրովն էր, զի Գործադիր Ժողովը մարմին առած և կեղր. Վարչ. Ժողովը վերջապէս Բարեղ Հաստատուեցաւ 1921 Մայիսի Ընդհանուր Ժողովի որոշումով միայն, մինչդեռ խնդրոյն բուն հեղինակները տուածին կեղր. Վարչ. Ժողովի Գահիրէի անդամները եղան, որոնց յետոյ եկան միանալ և գործակցիլ նոր անդամներ և կազմել Գործադիր Ժողովը։

Ահա՛ թէ որպիսի հանգստմանքներու մէջ ևս պարուասութեաց Բարձր Դատարանիդ վերին հեղինակութեանն աւ իմաստութեանը յանձնել դատա, խնդրելով ոչ ուրիշ թան, բայց եթէ խործամիտ և անուշառ արդարադատութիւն, որովհետեւ

1. — Միթէ հանդային հաստատութեան մը վարդիչներուն, ըստ որում ձրի կ'աշխատին, բար որոշումները վաերաբական և անքննելի են։
2. — Միթէ հանդային հաստատութեանց պաշ-

տօնեաները, երբ իրենց զրկանք և անիրառութիւն եղած է և իրենք այդ բանին համոզուած են, կուլօրէն պէտք է համակերպութիւն ցոյց տան, ըստ որում ամսաթոշակ կը առանան, և՝ բողոքներ կամ իրենց իրաւունքները պաշտպաններու իրաւունք չունին։

3. — Բացարարուած պայմաններու մէջ իմ արարքս կարելի՞ է անհաւասարութիւն, զիզծում, խորում, գողութիւն, պարագանցութիւն են։ Նկատել։

4. — Եթէ ոչ, եթէ աանցմէ ոչ մէկը չէ, ինչ պէս բացայացտ կը աւելուի, իրը այն ինձի հարկադրուած զվկանքներուն և անուանարկութեան փոխարինումը Բարեգործականի վարիչներուն անցեաածքելի պարագանութիւնը չէ։

5. — Իմ վատահամբաւութիւնս արձանագրուած է Գործադիր Ժողովի որոշումներու յատուկ տոմարին և անշուշտ նաև նամակներու ընդօրինակութեան յատուկ տոմարներուն մէջ պէտք է որ այդ արձանագրութիւնները մասն և պատմեն ամէնուն թէ ևս անպարկեցած պաշտօնականութիւնը մը եղած եմ։

6. — Կեղր. Վարչ. Ժողով, Գործադիր Ժողովը և Գահիրէի Մասնաժողովը պարտաւոր չե՞ն իւրաքանչիւրն իրան խիստ բաժնին համար ինձի յանձնել բարւոք պաշտօնավարութիւն և պարտազերծութեան վկայագիր։

Ահաւորիկ ասոնք են այն գլխաւոր պահանջները, որոնց համար կը գիմնմ Բարձր Դատարանիդ, որպէսզի արգարութեան լուսին առկ հաճի իրականացնել պահանք և ընդունիլ իմ խորին երախագիտութիւն։

Մասմ Զերդ խոնարին ծառայ Սեւյօնքեան Թովմաս Նախորդ Դիւանապետ Հ.Բ.Բ.Մ.Կ.Վ.Ժ. ի

ՎԵՐՋԱԲԱՆ

1924 — 1930

Այս տասն և մէկ անձնաւորութիւնները, որոնց  
խորհրդապահական նախագննութեանը ենթարկեցի յա-  
ջորդաբար սոյն բաղադրիս բնադիրը, կը կազմեն  
երկու փաստաբան, մէկ բրօֆէսէօր, եօթը յայսնի մը-  
տաւորական և հրապարակադիրներ և մէկ ապահովագր-  
ներկայացուցիչ :

Բացի այս վերջինէն, որուն ժխտական արագ-  
յալութիւնները զարմանքս գրաւեցին՝ ուսովհանե-  
ղինք անկաղնակալ մէկը ճանչցեր էի, նոյնպէս և  
յայսնի մռաւորականի մը (Syndic Expert) յարդելի  
պատճառով չեղոք մնարու պարագայէն, միւսները  
ըուրին ալ ինծի թեր արայալուսեցան և զարմանք  
յարանցին որ Բարեկարծականի վարիչները կարող  
չեն եղած բարւոք լուծում մը տալ խնդրոյն : Բայց  
և այնպէս համամիտ չի գանուեցան որ ևս գատի ձեռ-  
նարկեմ . ոչ թէ որովհեանեւ իրաւունքը իմ կողմս չէ, ոչ  
երեք, այլ որովհեանեւ, ըստն, Բարեկարծականը ուժ կը  
ներկայացնէ, իրաւունքը միշտ ստորադասուած է ուժին,  
որ տիրապետած է ցայսօր և այնպէս ալ կը շարունակէ»

Հաստատելով հանդերձ որոշ չափով ձմիաբառութիւն-

նը տասը, կը խորհիմ, եթէ բոլոր իրաւունէրները բո-  
զոքի ճայն չի բարձրացնէին, զատի չդիմէին, ոչ ապա-  
քին այդու քիչ մ'աւելի զօրացուցած պիտի ըլլային  
ուժի տիրապետութիւնը և քաջալերած իրաւունքի ան-  
անուածը և թէ ամէն իրաւունէր պաշտպանելով իր ի-  
րաւունքը պաշտպանած պիտի չըլլայ՞ր չափով մը նաև  
աւրիշներունը : Հետեւաբար այս ուղիով եւեթի կարելի  
է յաղթահարել ուժը և անիրաւութիւնը :

Առաջնորդուած այս սկզբունքն ես կը դիմեմ  
նաև Բարեգոծականի մեջ. Ընդհանուր Ժողովի, 7 նոյ.  
1924 ամսաթիւ գրովս և 4 Գնելու. 1924 ամսաթիւ հետո-  
գրովս, որոնց առացած պատասխանն ես կ'ըլլայ համի-  
մաս Գործադիրի տուած պատասխանին :

Արդարեւ, Գանձիրէի Գործադիր Ժողովի ատենապե-  
ար 27 Փետր. 1925 ամսաթիւ երկուողալ մը ինծի կը  
հաղորդէ հետեւեալ պատճէնը, որուն բնադիրը, 12 Փետր.  
1925 ամսաթիւ, Բարելի Կելոր. Վարչ, Ժողովի կողմէ  
ուղղուած է Գանձիրէի Գործադիր Ժողովին և որուն բո-  
վանդակութիւնը բառ առ բառ հետեւեալն է : —

« Տիար Թ. Սեւյօնքեան նամակ և հեռագիր մը ուղ-  
ղած էր վերջին Ընդհանուր Ժողովին, որ ստանց զանոնի  
նկատի անելու, յշած էր ժողովիս, առ ի հենութիւն (\*) :

Ժողովս, նկատելով որ սոյն խնդիրը արգէն քննուած  
(հենուած Ս.Թ.) և որոշման մը յանգած է, մերժեց Տ.  
Սեւյօնքեանի նամակն ու հեռագիրը վերատին քննու-  
թիւն ենթարկել : Հետեւաբար կը խնդրենք ձեզմէ որ  
հաճիք յայտնել Տ. Սեւյօնքեանի թէ ժողովիս համար իր  
խնդիրը վերջնականապէս փակուած է եւ ապագային  
իրեն կողմանէ ներկայացուած ուեէ խնդրանք անհամ-

(\*) Սուրագծումները իմ են : Ա.Թ.

ւանք և ուեէ նամակ անպատճախանի պիտի մնան:

(ստորագր.) Գ. Սինապեան»

Եւ. փառք յաւիտեանս տմէն:

Այս պատասխանը սիրոս կ'արիւնէ: Անո՞ր համար որ « ինդիբը վերջնականապէս փակուած է ( Գործադիրէն մինչեւ կեղրոն, այս անգամ մինչեւ խակ ի դէմտ հնդհանութ ժողովի ) և ասրազային իմ կողմէ ներկայացուած ուեէ ինդիբանք սենեւուեւանք և ուեէ նամակ տնպատասխանի պիտի մնան, ո՛հ, ոչ, հազար անգամ ոչ. որովհետեւ եթէ ունինայի իրաւունքիս արդարութեանը մասին զայզն երկրայսնք՝ առաջին օրէն պիտի հրաժարէի ուեէ դիմում կասարելէ: Խակ այդ իրաւունքը ա'նքան յատակ է և որոշ, ա'նքան բանաւոր է և արդար, որ ո՛չ մի ժամանակ չի փակուիր, չ կարելի փակի՛ ցորքան չ գոհացուած, ցորքան իր արդար լուծումը չէ զտած և այդ իրաւունքին տէրը ինքզինք պարտուո՞ր կը զդայ պաշտպանել զան իր բոլոր ուժավ, իր բոլոր միջոցներով ցորքան կը չնչէ. խակ երբ դադրի խակ իր շունչը և իր մարմինն ալ գերեզման դրուի, տակաւին դարձնալ իր հոգին կուգայ իր իրաւունքը, իր պահանջը, իր բոլոքը լուռ ու մոնջ գոռաւ բոլոր անիրաւողներուն խղճին ու սրովին և ա'յն ատեն միայն կը զագրի հետապնդելէ երբ տիրոջը կամ յաջորդներուն կը վերադարձուի իրաւունքը, երբ արդարութիւն կ'ըլլայ:

Ի՞մ սիրոս կ'արիւնի անո՞ր համար միայն որ, Բարեգործականի վարիչները շեղած են ուղեգիծէն որ իրենց համար սահմանուած է, և երբ ա'յսքան ձգձիմ, անշան խնդիր մը կարող չեն եղած կամ ուղած ողջմասութեամբ քննել և արդարութեամբ լուծել՝ ի՞նչպէս պիտի կը ման արժանաւորապէս վարել այդ հոյակապ

Հաստատութեան բազմապահանջ գործերը, զորս իրենց ուսերուն վլայ առած են և կը կրեն:

Մի միակ մարդ, ճշմարտաէր, կարիճ տղամարդ ալ չի գտնուեցաւ իրենց չարքերուն մէջ որ ծառանար՝ կիրքով; հաշիւով, քէնով, վրէժինդրութեամբ, գիմաւորուած ուեէ ինդիբոյ առթիւ և հակազդելով այդ ողիին՝ պարտաւորցնէր լսել բանականութեան, ողջմասութեան, ճշմարտութեան ձայնը և ըստ ամեմ խղճամիս և արգար որոշումներու առաջնորդէր:

Պ. Գ. Սինապեանի նամակն խակ, որ գրուած է Բարիզի կեղր. Վարչ. Ժողովին կողմէ հակասութիւն և խեղաթիւրում կը ներկայացնէ:

Ի՞նչպէս նկատի առած չըլլար ժե. Ընդհանուր Ժողովը իմ նամակու ու հեռագիրու՝ երբ զանոնք կը լիէ կեղր. Վարչ. Ժողովի « առ ի հնաւթիւն »: Հակասութիւն ուրեմն:

Երբ Ընդհանուր Ժողովը ինդիր մը « առ ի քննութիւն » (Պ. Գ. Սինապեանի խակ բառերով) կեղր. Վարչ. Ժողովի կը լիէ, այս վերջինը իրաւունք ունի զայն մերժելու, բալելու, ըսելով որ « արդէն քննուած և որոշման մը յանդած է »:

Ի՞վ է քննած, ո՞վ է որոշած: Գահիրէի Գործադիրը, անոր նշանակած Յանձնաժողովը, կեղր. Վարչ. Ժողովը: Մինչեւ հոս ինդիբոյն ամփոփումը բաւական զո՞վը: Մինչեւ կը կարծեմ սնունց այս ինդիբոյն մէջ ներկուսարանեց կը կարծեմ սնունց այս ինդիբոյն մէջ ներկայացած հանգամանքը և տունալ կարգախօսի մը համաձայն առնոււած որոշումներու բնոյթը և արժեքը, որոնք եթէ բաւական պիտի նկատուէին՝ ինչո՞ւ ուրեմն Ընդհանուր Ժողովը « առ ի քննութիւն լիէր ինդիբը » կեղր. Վարչ. Ժողովի:

Երկու աղնուական անձնաւորութիւններու պակասը

միսն՝ վախճանմամբ և միւսին ի խոր ծերութեան՝ մահա-  
քամանութեանց նոտեւելու անբաւականութեամբ — որ-  
քան, որքան զգալի է:

Անոնց չուքը, միսկ բառը կը բաւէր արդիլելու  
ունէ սայթաքում և պահելու ուղեղիծը անազարտ և  
անբախտ :

Բացի դայս վայր յիշատակուածներէն ևս յդեր  
ևս ապահովագրեալ մի զեկուցալիքը, 17 Յնգր. 1926  
ամսաթիւ, թէ՛ Կեդր. Վարչ. Փողոսի Բարիզ, և թէ  
Պորժագիր Ժողովի Գահիրէ, հունեւեալ հղափացութիւն  
ներկ : Ներկացիւալ կը բայսարարեմ թէ:—

1.— Քարեղործականի Վարիչները տոնուազն պար-  
ուուոր են հրապարակային խղճամիտ և ծշդրիւ զե-  
կուցում մը կասարել, վերը յիշատայուած սնցքե-  
քու մոսին, լուսաբռնելու համար տանիւեակ հազարաւոր  
անդանները և հանրութիւնը հուսարապէս, և զիս ի-  
քաղեկ ընել միաժամանակ իրենց զեկուցութեարան, որ-  
պէս զի ի վիճակի ըլլամ ճշգում կասարել ի հարիին :

2.— Եւ կամ պարաւաւոր են խնդրոյն մանրակիրիա  
քննութիւնը յանձնել Քնդիչ Մարմնի մը, իրենց և իմ  
կողմէ հաւասարապէս բնորուած 2 ական ունձերէ, որոնք,  
Քարեղործականի և իմ հաւանութեամբ կ'ընարեն ծրագանձ  
մք՝ իրքնափառան, քանի մը օրուան ընթացքին կը կասա-  
քեն այդ տշխատութիւնը խղճամորիէն, կը գոյացնեն իրենց  
համոզումը և հզրափացութիւնները կը հրասարակուին  
ևթէ երբեք կողմներէն մին կամ միւսը չուզէ համա-

3.— Իսկ եթէ այս երկու առաջարկները եւս մեր-  
հնէն, այս առեն հաստատած պիսի ըլլան թէ իսծի  
համուէպ իրենք ոչ թէ միան խղճամիտ, սնկեղծ և  
շիտով վերաբերում մը չեն ունեցած, ինչպէս կը պա-  
հանջէ հանրօգուտ հաստատութեան մը Վարիչի ամէն:

պաշաճն, այլ նուև զրագրաւոծ են զիս վասարար, նեն-  
գամտօրէն յերիւրելով անդոյ պատմութիւն մը և զիս  
Խնթարկելով բարոյակոն և նիւթական ծանրագոյն կո-  
չուամաններու, որոնց հոսուցումը իրաւունք պիտի ունե-  
նամ պահանջներու օրէնքի ուժով :

Ինչպէս կը տեսնուի, միշտ հետամտեր ևմ լոիդի  
մաջիկ ինոբրյոն լուծումը չեւոք ըմբիւ, որպէս զի յեւոյ  
խորհանարելու ունէ պատճառ չունենում, երբ հարկադ-  
րուխմ խնդիրը հրապարակել :

Այդ մտանորութեամբ կողմնակի միջոցներ աւ փոր-  
ձեր եմ, զիմիլով Ամերիկայի Ընդհ. անօրէն Մէթր Վ.  
Քիւրծեանի՛ վեց էնոց զրաթեամբ մը՝ 9 Սեպտ. 1926  
ամսաթիւ, ինչպէս նուև ներկայիս «Ապագայ» ի խըմ-  
բագրասպետ և Թեմիք. Ազատ. Կուսակցութեան Կեդր.  
Վարչութեան Ընդհ. Քարտուզար ընկեր Սրոտոկ Դար-  
քինանի՛ երեք էնոց զրութեամբ մը՝ 27 Սեպտ. 1926  
ամսաթիւ :

Կ'անդիխանամ թէ անսնք 1926 ի Ընդհ. Ժողովի՛  
զուրմն ու ներսը ունէ զործոն զեր կասարել փորձե-  
ցին թէ ոչ, եւ կամ եթէ երբեք քաշութիւնը ունիցան  
արտի եւ խղճի պարասականութիւն մը կասարելու արդ-  
մոք ինչ արդիսնք կրցն ձեւոք ըմբիւ, որովհետեւ այդ  
մասին ունէ տեղեկութիւն չեմ սատցած :

Այսու ամենայնիւ, ինչ որ ալ եղած ըլլան Բարեգոր-  
ծականի Վարիչներուն սնցեալի եւ այժմու արամազու-  
թիւնները, գործելու կերպերը ևւ բանելիք զիրքը  
մտանարուապէս այս խնդրոյն վերաբերութեամբ, որ  
կընոյ իրը չափանիշ ծառայել անոնց ընդհանուր գոր-  
ծելակերպի, ես երբեք չեմ կասկածած իմ իրաւունք  
արդրաբութեանը, ոչ ու երբեք հաւասարացած եմ թէ ա-  
նամք կրնան խաղատ կորսուած նկատմակի՝ Վարեկործա-

կանի պէս հաստատութեան մը կողմէ : Առշ կամ կանութեաբանակամութեամբ կամ դաստարանի միջոցու , ըայլց անկերպայօրէն այս խնդիրը պիտի վերնկատուի , վերաքննուի և իր բանասուր տրդար լուծումին պիտի արժանանայ : Այսպէս ըստորովին յայսերնիս կորել հարգէնէրէն , ինչ որ մեմ յուսար , կրնաք գիմնի *Tribunal mixte* և սասանալ ձեր իրաւունքը :

Կուզոյ ժամանակ երբ նոր գէմքեր կ'անցնէն դորժի

գլուխ , գործունէութեանց ուղղութիւնը կը բարեկան եւ կ'ունենան անդրադարձում անցեալի սիսաներու զանոնք սրբազնութիւնը կ'ունենան մրովնեալ Բարեգործականի հիմնարկութեանէն մինչեւ իր վիրահաս մահը՝ աւելի քան քսան տարիներ անոք հաշուեքնիչը , ողբ . իտկար Փափագեան , քննեց այս խնդիրը 9 Սեպ . 1923 ի կիրակի օրը , իր քեռոյցին՝ Տ. Յովսէփ Սիսանեանի բնակարանին մէջ և ներկայութեան աւելի քան երկու ժամէ աւելի ժամանակի , հարցութեանց , փոխանակուած գրութիւնները կարգաց և ահա թէ ի վերջոյ ինչ եղակացութիւններու յանգեցաւ .

« 1. — Վատահամբաւութեան խնդիր գոյաթիւն չունի , քանի որ ձեզի ուրիշ պաշտօնակար յանձնուած են և աշնան անկարեւոր նկատուած է խնդիրը , որ ցաւոր ոչինչ բառած է խնդիր անոր մասին , ըսել է թէ առի չէ անմուած իսկ :

2. — Ես միշտ պատրաստ եմ ձեզի տալու ձեր խընդարիս և պարկեալ պաշտօնավարութիւնը հաստատող վերաբեկան մը :

3. — Իրաւունք ունիք առանալու իրեւ հասաւում ձեր թերթաւիւ գանձած 100 , ինչպէս նաև զեղչուած 15 ոսկիէն զատ , նուազագոյն 200 ոսկի եւս :

4. — Կը ներկայացնէք տարեվճար մը հաստացումք :

Ա. արձակուրդի ձեր իրաւուքնները մանրամանող հաւաքուցոյց մը , զեղչելով 100 ոսկիէն և ցոյց տալով ձեր մնացորդ պահանջը , զոր եթէ բարեկամուբար չի կարգադրեն , ինչ որ մեմ յուսար , կրնաք գիմնի *Triunal mixte* և սասանալ ձեր իրաւունքը :

5. — Անջատաբար կրնաք պահանջնիւ Մասնաժողովի քարտուզարութեանէ հրաժարեցումի հաստուցում մէկ եռամուեայ և ձեր Սեպա . ամսաթոշակը :

6. — Կեդր . Վարչ . Ժողովի ժաման գրած ձեր համակին մէջ ձեզ զաստավարսող պարագայ չեմ տեսներ :

7. — Գողութեան , խորումի , զեղծումի պարագայ գոյութիւն չունի , այլ պարզ թերացամ մըն է եղածը , որ կանխատ գանձապետին չէք իմացուցած թէ կանխավորմարի մը պէտք ունիք , ինչ որ ապահովապէս պիտի չի մնրժուէր :

8. — Եւ արդէն Գեկտ.ի սկիլքը դրամարկղը յանձնած էք առանց ուեէ պարտք ձգելու , ինչ որ կ'ապացուցանէ ձեր կանխազոյն յայտաբարութեանց ծշմարութիւնը և ձեզ զերծ կը կացուցանէ ամէն մեղադրանքէ » :

Ողբացեալ հաշուեքնիչին անվիճելի ձեռնձասութիւնն ու կարողութիւնը Գահիքէի Խառն Գտտաբաններուն ու Զուրի Ընկ . պէս կարեւոր հաստատութեանց ու դրամաստիւերու մօտ հանգածանօթ ըլլալով , հարկ չեմ տեսներ բառ մը իսկ ըսել իր անվիճելի հեղինակութեան ժամանի :

Իր առաջին եղակացութիւնը սակայն , վատահամբաւութեանս մասին , հիմնալին կը տարբերի իմինէս և զիս տարեամողելու չի զօրիք , ոչ իսկ այսօր , եօթ տարիներ յատց , ուր խոցոտուած սիրս նոյնքան ուժգնութէն կը կոտայ որքան առաջին օրերը :

Այսու ամենայնիւ , իո՞ կողմէ Բարեգործականի վարիչներուն իրեւ վերջին պատեհութիւն մը , իրաւունքներս հանչնալու և փոխարինելու , կը տարամադրեմ մինչեւ Յունիս ամսոյ վերջը ժամանակի , ինծի վերտապահելով գտատրան գիմնելու անժիմտելի պատութիւնս՝ այսունետեւ :

## ԹԵՂԱԿՐԱՆՔ

1.— Հայի, Բարեզ, Անդի. Միութիւնը նորին վահանակութիւն Պօղսո Փաշո Նուպարի և իր գործակիցներուն ազգին նուիրած Մեծ Աւանդն է, անոնց յիշաստիկի կոթողը, զոր պէտք է նկատել երկնային պարզեւ մը Հայութեան, որպէս սպեզանի քառորդ գարէ ի վեր անոր կրած խորունկ վէրքերուն և ափարար անոր թշուառներուն, որբերուն և ամէն կարգի տառապեալներուն, ինչպէս նաեւ հզօրագոյն ազգակ ազգային վերածնութեան և Հայրենիքի վերաշնութեան :

Ամէն Հայ ինքինք պարտաւոր պէտք է զգայ իր յարդանքի տուրքը ընծայաբերել անոր և արժանաւութիւնը հաստատել :

Ապացուցաներու ո՛չ մէկ կարիք կայ Հայուն բարեւիրութիւնը, զթասիրութիւնը և այլասիրութիւնը : Համաշխարհային վիճակագրութիւն մը առաջին դիեռուն վրայ պիտի հաստատէր ապահովապէս Հայութիւնը, ևթէ ոչ առաջին :

Անոր առաւելագոյն օժանդակութիւնը տուկաւին հանդէս չէ եկած, որովհետեւ զայն առինքնող ուժը նոյնպէս հանդէս չէ եկած :

Բարեգործականի Վարիչները ամէն կարելիութիւն առնին, ևթէ ուղեն, իրականացներու թէ մէկը և թէ միւսը :

Սյա ուղղութեամբ ամէն աշխատանք ապահովապէս պիտի արդիւնաւորուի այն համեմատութեամբ ուր-

շնորհատում տեղի չունենաց և մեթոսիկ ու յարատեակ գործունէութիւն մը ապահովուի :

2.— Վարիչներ, պատօննեաներ, գործիչներ.— Ասոնց համագործակցութիւնը, համախոն և ներգաշնակ գործունէութիւնը ապահովուելուն կապուած է միծագոյն յաղողութիւնը :

Պաշտօնեաները նո՛յնքան օգտակարութիւն ունին որքան վարիչները, անոնց եղբայրակցութիւնը կ'ամբ բացնէ Միութեան հիմերը, ընդհակառակը ամենապոյզն խափերը, հրամայողի և հրամայուղի կերպերը, Վարիչներէն դէպի պաշտօնեաները արհամարհանքի չնչին նշնն մը կը խախտէն, կը ցնցին ամենաամուր հիմերն խոկ : Փոխագարձ յարգանքի, զիրար լրացնող շինուար աշխատանքի, սրտեանդն և բոլորանուէր գործակցութեան մինչըստեանութիւնը ամէն մարզի մէջ՝ ոչ մէկ անդ այնքան հրամայական պահանջ է որչափ չ . Բ . Հ . Միութեան մէջ :

Գործիչները պէտք է զգոյ ըլլուն աւելորդաբանութիւնէ, հզուածներուն հետ չեղածներն ալ թուելէ և կամ ըլլալիքները իրեւ եղոծ լինցած ներկայացնելէ : Այսպիսի ծանօթացում մը կամ բրօրականա մը վնասավար է Բարեգործականին, որ երբեք պէտք չունի մասմէջ, անգոյ և իրականութեան անհամապատասխան և կամ պէտքէն աւելի ռեկամի : Որչափ ալ միսմիս ըլլուն մարդիկ, ուշ կամ կանուխ կը հատկընան տարիերութիւնը իրենց բառածներուն և ստուգիւ գործադրութներուն և այդ վայրկեանէն խակ վերապահութիւնը և կասկօծը բայն կը զնեն իրենց մաքին մէջ, զորս հակազգել և առաջ ակած եկած ուժացումներն առ հեռացումները գործանել չափազանց գժուար կ'ըլլաց Յ . ևթէ ոչ անկարելի :

Բարեգործականը պէտք է ըլլայ, եթէ չէ տակաւինո-  
գոլոց մը բոլոր անդամներուն, Մասնաժողովներուն-  
Յանձնաժողներուն, գործիչներուն, պաշտօնեաներուն  
և Վարիչներուն համար միանգամայն, եթէ ոչ կատար-  
եալ գոյնէ մերձաւոր ասախճանի վրայ, ուր ամէն ոք ու-  
սուցանէ և ուստանի, ներշնչէ և ներշնչուի, զարդնէ ու-  
գործնուի համեստութեան, մնթոտիկ աշխատութեան,  
Զշմորիտ գթասիրութեան և զոհաբերութեան մարդին  
մէջ այսպէս մը, որ անոր ամէն մէկ պարզ անդամը առ-  
գործուի և թրծուի միեւնոյն ամուր և անխախտ համոզու-  
մալ և իր կարգին դառնայ անպաշտօն գործիչ իր շրջանա-  
կին մէջ, տարածելու նպատակին վսեմութիւնը, գրաւելու  
սիրածու և անդամ արձանագրելու, ինչպէս նաև կա-  
թենայ մի օր ձեռնհասորէն վարելու գործերը, իր շար-  
քերէն ընտրուի կամ կոչուի պատասխանատու մարմին-  
ներու անդամակցութեան և կամ պաշտօնի:

3. — Կազմակերպական. — Ոչ մէկ հաստատութիւն  
քանի Բարեգործականը ինք, կեղանչն մինչեւ յետին  
Մասնաժողը, կընայ հայնել իրեն պէտք եղած մար-  
դիկը, վտրելու, գործելու և ատարածելու անսակէտով:

Իր շարքերուն մէջ, կըթական և այլ հաստատու-  
թիւններուն մէջ, գժուար չէ տեսնել ընդունակու-  
թիւններ, կատարել ընտրանք, մարզել կարիքներու  
համապատասխան ուղղութեամբ, ի հարկին մասնագի-  
տական հաստատութեանց մէջ տեղաւորել որոշ շրջան-  
ներով՝ մինչեւ որ լու մը հաստանան և յետոյ թեր-  
թերաքանչիւրը որոշ աշխատութեանց՝ որպէս առաք-  
եաները Հ. Բ. Բ. Միութեան, իր կեդրոնին մէջ իսկ  
ժամանակ մը գործական փորձառութեան մէջ մարդե-  
լէ վերջ:

Առողջ մէկ ուղղութեամբ պիտի գործին, միօրի-

նուկ դրութիւն պիտի հաստատեն բոլոր Մասնաժողնե-  
րուն մէջ, ուր պիտի համոզիանան նուե լաւագոյն  
քայլականախաղներ և հրահանգիչներ :

Բարեգործականը մինչեւ այսօր, քառորդ դարու  
պահանին, արդէն իսկ հասցուցած ըլլալու էր զանոնք,  
մանաւանդ իր որբանցներուն ընտրանիներէն և ցայ-  
տաւացուցած թոշակաւոր կամ անթուշակ պաշ-  
առնեաներու շարքերէն, փոխանակ մարդու պակասէն  
առնեաներու : Այսօր ուշ չէ գարձնուլ, ունի շատ կա-  
զմականակալու : Այսօր ուշ չէ գարձնուլ, ունի շատ կա-  
զմականակալու : Այսօր ուշ չէ գարձնուլ, իրեն պէտք եղած  
մարդիկը՝ իրեն վարիչ, պաշտօնեայ և գործիչ :

Կեդր, Վարչ, Փողովներ իրենց կողքին անհրաժեշտ  
է որ ունենան երկու օժանդակ մորմիններ, մինչեւ  
այսօր Ծրագիր-կանոնագրին մէջ ոչ նախառակածուած և  
աշաւ որբագրուած: Անողջ պիտի ունենան աշխա-  
տաւթեանն հասկեանը բաժմանութերը. — Մէկը պիտի  
թափէ իր բոլոր ճիգը ընդհանուր հասոյիցը առելցելու  
համար, իսկ միւսը ընդհանուր հասոյիթերը իմաստու-  
թեամբ: առանապիտօրէն բուն նախառակին յատկացնե-  
թեամբ: առանապիտօրէն եւս իսկ մտօրէն ու կարելի ըր-  
ցու և յատկացնեթեամբ և հաստատութեամբ կամ գործադրելու կամ  
ժամանգութեամբ և հաստատութեամբ կամ գործադրելու առլու համար:

Առողջ ուրոյն մարդիր են և կը պահանջնեն ուրոյն  
ինամբ և գործունէութիւն:

Այսպէս կազմուած կրկին կարեւոր մարմինները  
կեղանի վարչութեան առընթեր և անոր վերին հեղինա-  
կագրութեան առկ ու խորհրդակցական գործակցութեամբ,  
կառթեան առկ ու խորհրդակցական գործակցութեամբ,  
վայց ըրտարակին առատ կաշկանդիչ կապանքներէ և  
միջամտող ողղեցութիւններէ, պիտի կրնան առլ Բա-  
րեգործականին այսուիսի վարիչ մը որ յոյժ պատուարել  
կապութեամբ միանգամայն պիտի ըլլայ:

Հասութահաւաք տուաջին մարմինը իր գործունեցութիւնը պիտի տարածէ բոլոր Մասնաճիւղներուն և ունէ անսանի տոկ նպաստահաւաք մարմիններու վրաց գորա պիտի տուզէ ի հարկին չի գտնուած անդերը և պիտի քաջալերէ գործակցութիւնները:


Իսկ միւս Տնտեսական Մարմինը իր ափին մէջ պիտի կեղբանացնէ բոլոր հասոյթները, իր իրաւասութեան և մանրախոյզ քննութեան ու հակակշախն պիտի եւթարկէ նպաստաբաշխ բոլոր Մարմիններն ու պաշտամանները և ոչ մի ծախոք կամ նպաստ պիտի չի թոյրատրէ առանց կոնֆիւս համոզում գոյացներու անոնց արդարացիութեանը:

Կեդր, Վարչ, Փաղալը միանդամայն պէտք է հրաժարի իր Կեդրոնին և Եղիպատոփ Շրջանային Վարչութեան մօտ գտնուող Մասնաժողովները նշանակովի պաշտօնի կոչելու ցայսօր կիրարկուոծ ոչ-օգտակար գրութենէն և նոյն քաղաքաբներու անդամները եւս օժաէ մընացեալ ընդհանուր Մասնաճիւղներու իրենց Մասնաժողովները ընտրելու իրաւունքով զի այս մասնակտութիւնը որ գոյութիւն ունէր սկզբնական շրջանին ներիլի չէ այլւետ:

« Սիրէ, քու ընկերող քու անձիդ ու էս և ինչ որ կուզես որ մարդիկ քեզի ընկն դան ալ անոնց այնպէս ըրէ » :

Այս աստուածային պատգամը կը հաստատէ թէ Բարեգործութիւնը է միանդամայն աստուածային պատգամն մը:

Այդ պատգամը պէտք է տիրող ոգին ըլլոյ Բարեգործականի ընդհանուր գործունէութեան մէջ, որուն ՀՈՒՍԱՐԻՄ գործարքութիւնը պիտի ամրացնէ Բարեգործականի հիմունքը և ամէն Հոյ իրեն համար Պատառոյ Վկարական մը պիտի նկատէ անգամ ըլլոյ այդ անսունինթաց մեծագութիւն կազմակերպութեան:



ՀՀ Ազգային գրադարան



43. 263

ՕՉԻՒՆ Գ.Ա.ԹԵՎԵՍՔԻ Ա. ՄԱՍ (Նպառած)



---

Printed by "Sañag - Mesrob"  
25, Sh. Tewfik, Cairo, Egypt